

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՌՈՒԲԵՐՏ ԵՍԱՎՅԱՆ



ԻՆՔՆՈՒԹՅԱՆ

ԴՌՆԵՐ

**ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆ**

**ԵՐԿԵՐ**

*Չատոր հինգերորդ*

## **ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՈՆԵՐ**

*Բանաստեղծություններ*

*Երկու բառի միջև կանգնել եմ, որպես  
հաղորդության խորան,  
և ինձ խոսեցնում է լռությունը բառի:*

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն

Ստեփանակերտ-2018

ՉՏԴ 821.19-1 Եսայան  
ԳՄԴ 84(5Յ)-5  
Ե 583

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

**Յրատարակվել է ԼՂՀ պետպատվերով**

***Շապիկին և գրքի մեջ օգտագործված են  
Սամվել Գաբրիելյանի ստեղծագործությունները***

Եսայան Ռոբերտ  
Ե 583 Ինքնության դռներ: Բանաստեղծություններ/ Ռ. Եսայան.-  
Ստեփանակերտ: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2018.  
Հատոր հինգերորդ.- 208 էջ+4 էջ ներդիր:

Հատորում ընդգրկվել են հեղինակի նոր բանաստեղծությունները, որոնք  
աչքի են ընկում ինքնատիպ մտածողությամբ և ուրույն պատկերավորու-  
թյամբ:

Բանաստեղծի նախորդ գրքերը («Նժար», 1995թ., «Ոգու թռչունների հայ-  
րենիքում», 2013թ.) արժանացել են Հայաստանի գրողների միության Դանի-  
ել Վարուժանի և Ավետիք Իսահակյանի անվան մրցանակների:

2008թ. Ռ.Եսայանը Հայաստանի մշակույթի նախարարության կողմից  
պարգևատրվել է «Ոսկե մեդալով»:

ՉՏԴ 821.19-1 Եսայան  
ԳՄԴ 84(5Յ)-5

ISBN 978-9939-1-0812-4

© Ռոբերտ Եսայան, 2018



**ԵՄՄԱՆՈՒԵԼ ԲԱՆԻՄԻՆԻ**

**Եվ բաց է երազն,  
ինչպես գրասեղան,  
որին սահող թղթերը  
հրեշտակի թևեր են...  
Եվ գրչիս ծայրին  
թարթվում է աչքը  
ճակատագրի,  
և տիեզերքի դուռը  
ձեռքն է Արարիչի...**

## ՊԱՏԳԱՍ

Իմ հայրենիք, հավատավոր իմ երկիր,  
չհր, պատրանստ պահիր միշտ քո վառողը,  
և մի կասկածիր, կհասնես բարձունքին,  
ուր Եռագրյնն է, փառքիդ վառ օղը:  
Եվ հիշողության ոգին է զարթնում,  
որպես տիրակալ,  
երբ քո երազում երկինքն է ոգի,  
իսկ կյանքն՝ ուղենիշ,  
ոչ մի վերք ու ցավ չեն ընկձելու  
ընթացքը Ցեղիս,  
և ոչ մի պատնեշ, կափարիչ ու դուռ  
չեն դիմանալու քո արիական ոգուն շառաչուն...  
Ի՛մ հայրենիք, աստղանկար իմ եզերք,  
քո արյան մեջ,  
ոգուդ հյուլեում  
բաբախում է մի ողջ տիեզերք,  
և քո ձայնի արձագանքն անգամ  
հանկ է դաշտերում,  
և քո հայացքի ճառագայթը բարկ  
Անսահմանության թրթիռն է բեղուն:  
Եվ ծաղկեփունջ են մատներդ լուսե,  
որոնցից նեկտար են քաղում  
ճանապարհների աստվածաբուրմունք...  
Եվ Պատարագիդ ուխտավորն ինքը՝ Յոնմի Պանյն է...

Ի՛մ հայրենիք, դավթաբազմիկ իմ Չայաստան,  
քո գոյության սյուները,  
որոնց վրա հենված է երկինքը,  
հավանտն է, լեզու՛դ, հո՛ղդ և զո՛րքդ:  
Ամեն Աստծո օր  
ծնվում-հառնում ես,  
որպես Արարատ,  
Աղոթքի՛ երկինք:  
Եվ քո լեզվի մեջ ապրում ես, որպես  
Թագավոր, Չինվոր:  
Եվ սնվում ես դու հողից, ուժ առնում՝  
հասնելով Ոգուդ աստղականարին:  
Եվ բազմատրոփ ընթացքով հիմա  
հրեշտակներիդ զորքերն են շարժվում  
դեպի բիբլիական ու սուրբ հանգրվան:  
Եռագույնով է դիմավորում մեզ Մասիսն արևկա...  
Եվ սաղմոսում է տիեզերքն համայն ծայնով Նարեկա...  
Երկիր իմ, ներկադ  
քո ապագան է,  
իսկ քո ապագան՝  
խարհսխն անցյալի,  
և տիգրանաթա՛գ տերությունն է քո:



## ԻՄ ՅԱՎԱՏԸ

Երբ քո կայծքարե ձայնից բացվում է  
առագաստը իմ ոտնահետքերի,  
աստղերն են ծնվում հերկերում լույսի,  
բողբոջն է պայթում,  
թռչունն է խմում ցողն հորիզոնի:  
Ես վերստանում եմ կողմնացույցն Աստծո,  
և իմ ապագան դառնում է հաստատ ու տեսանելի...

Իմ ոգու հողե տանիքն է թևածում՝  
փնտրելով իր պատերն ու ճրագը...  
Եվ իմ ձայնը ոգու պես Անհայտի  
թավալվում է ավազների տակ,  
որպես անապատի քամի:  
Եվ արյան ճիչեր են բարձրանում թևերից անապատների...  
Ես հնչյուն եմ անհայտ կորածների:  
Ես լրնյուն եմ կենդանի թաղվածների:  
Լուսաբացը սկիզբ է առնում իմ խոսքերից...  
Որտեղ էլ հասնեմ՝ ես Անսահմանի շնչառությունն եմ...

Ես աշխարհ եմ եկել,  
թե՛ ավելի շատ մնացել եմ  
արգանդում հիշողության:  
Ինձ թալանել են,  
բայց ես չեմ զատվել ոգուց պատմության,  
զարկել են,

Իսկ ես վերածնվել եմ,  
որպես Չայաստան:  
Ես հայ եմ, անսպան մի աղբյուր  
Արևելքի ոգու խորանում:

Չայտնությունս սա՛ է.  
դղրդում են ցավի անդունդներն անհագ,  
և Թուրքիան, որպես  
կափարիչ Խավարի,  
գլորվում է  
պատմության աստիճաններով...  
Եվ Մասիսն Չիսուսի Նոր Գալուստի դրնն է...

\* \* \*

Աստված իդեա՛լ է. ձգտո՛ւ եմ հասնել,  
ոգիս կամուրջ է այս ճանապարհին,  
որով անցնում են բառերն իմ հասուն,  
ես ի՛նձ եմ հասնում, թե... Մասիս սարին:

### ՕՐԱԳՐԻ ԷԶԵՐԻՑ

#### 1. ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉ Է ԱՌԱՆՑ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ

Տարածությունն ի՞նչ է առանց հիշողության,  
զսպանակ է, ոչ թե ցատկահարթակ:

#### 2. ՄԵՐ ՇՆՉԻՑ ԱՐԹՆԱՆՈՒՄ Է ՄԻ ՍԱՂՄ

Եվ դարձյալ խորքերի խորքերում  
մեր շնչից արթնանում է մի սաղմ,  
որ հրում է հողածին ուժով  
կափարիչն անգամ երկնքի,  
և Աստծո արցունքը, որպես ակ,  
փայլում է մեր խաչին խնդությամբ:

### 3. ԶՈՐՅԱՍԵՂԱՆ Է ՃԱԿԱՏՆ ԱՆՅԱՅՏԻ

Զոհասեղան է ձակատն Անհայտի,  
ամպի փետուրը - ապսպրանքն Աստծո,  
ո՛վ է ձակատագրիս սահմանագիծն հատում  
և փետուրով գրում պատգամը կյանքի:

### 4. ՅԱՍՑԵՆԵՐԸ ՑԱԿԻ

Գիտեմ, երկինքը ծրարներից կյանքի  
ջնջում է հաճախ հասցեները ցավի,  
մնում է մի հասցե միայն-դա իմ սիրտն է,  
որ ծակծկվում է գագաթներից բախտի:

5. ԿԱՐԾԵՍ ՕՐՆ Է ՅՐՈՒՄ ԻՄ ՃԱԿԱՏԻՑ ԴԵՊԻ  
ԱՍՊԱՐԵԶԸ ԱՅՍ ՆՈՐ

Յրեղեն մի ծիլ ճանապարհն ի վար  
կափարիչն է հրում,  
կարծես օրն է հրում իմ ճակատից դեպի  
ասպարեզը այս նոր,  
մոլորակն է գլորում  
մի աստղային, արբշիռ ճանապարհով...

6. ՀԱՅԱՑՔԻՍ ՀԱՑԸ

Եվ ճանապարհը ուտում է հացը հայացքիս,  
որպես զոհասեղանից արծակվող մի ձիջ:

## 7. ԾԱԳՈՒՄ Է ԼՈՒՅԱԸ

Եվ հորս ձայնը, որպես ծաղկած ճյուղ,  
բուրնում է քամու պարանոցն ի վար,  
և թռչող երամի հետագծով կարմիր  
ծագնում է լույսը...

## 8. ՑԱՎԻՍ ՄԵՋ, ԳԻՏԵՄ, ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ցավիս մեջ, գիտեմ, շարունակվո՞ւմ է  
պատարագը ոգու,  
և ծիծեռնակի թռիչքի հետագիծն,  
ինչպես մանանա,  
մաղվո՞ւմ է հայացքիս դաշտերի վրա:

9. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽՈՍՔՈՎ ԾԱՂԿՈՂ ԻՄ ՇՈՒՐԹԵՐԻՆ

Աստվածային խոսքով ծաղկող իմ շուրթերին  
արշալույսը գլորվեց,  
որպես Նոր Ավետին:

10. ԲՈՆԵԼ ԵՄ ՅԱՅԱՑՔԻԴ ԹԵՎԸ ԹՐԹՈՒՆ

Բռնել եմ հայացքիդ թևը թրթռուն,  
որպես աղավնի,  
և թռցնում եմ տանիքներից անհայտի:  
Խղճի լապտե՛ր է  
ընդերքը բառի:  
Եվ ոտքերիս տակ լուսանում է  
ճանապարհը տառապանքի:

## 11. ՍԵՐԸ ՊԱՏԱՆԴ Է, ԻՍԿ ՃԱՆԱՊԱՐՅԸ՝ ՍԱՊԱՏ ԵՐԱԶԻ

Սերը պատանդ է, իսկ ճանապարհը՝ սապատ երազի,  
որը մաշվում է ոչ թե ձայներից,  
այլ անապատի փոթորիկներից:  
Թե ծառի ճյուղը ակունքն է լույսի,  
իսկ մահը՝ ստվեր,  
իմ լռությունը ուռկան է,  
որում թփրտում է դեռ  
երկրիս ապագան:


## 12. ԽԵՆԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ, ՃԱՆԱՊԱՐՅԻ ՅՈՂՄ

Խենթության առանցք, ճանապարհի հողմ,  
հայելու վիհը լցվում է տարբեր  
տեսարաններով,-  
տենդ է շուրջբոլոր:  
Եվ ճանապարհս բուրում է ելքի  
ձնծաղիկներով:



13. ԼՈՒՍԱՎՈՐՎՈՒՄ Է ԽՈՐՔԻՑ ԱՄԵՆ ԲԱՌ

Լուսավորվում է խորքից ամեն բառ:  
Օրը ընկերքն է նորածին երկրի:  
Եվ իմ ուսերին հենվում քնքաբար  
ու կայանում է անհայտությունը-  
մի որմնանկար:



Նկարը՝  
Ալվարո Գրիգորյանի

ԵՍ ՄԻՏՔՆ ԵՄ ԼՈՒՅՍԻ,  
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՅՈՊԻՆ

Անդրժամանակի տարածքն է բառը:  
Յիշողության զարկերակը:  
Եվ հիշատակի պարսերում խճճվե՛լ է  
լույսն արեգակի:  
Իմ ճանապարհը հուշարար է...  
Դիմագծերիս պարսը հոսում է  
ծառի բունն ի վար,  
և մրջյունները հատիկ առ հատիկ տանում են  
հասկը իմ մենակության:  
Սկիզբը  
իմ բանն է, իմ խաղի ոգին:  
Դեմքիս պահուստները  
անդրադարձներ են...  
Իսկ հորս հայացքը վառվող մի ճրանգ է:  
Ցավի երկինքներից թափվում են կրկին զանգերը բառերի:  
Առանց երազի ոգին երկինք չէ՛,  
այլ՝ մերկ անապատ:  
Եվ ճակատագրի հայացքն այլայլվում է,  
երբ իմ կոպերից արցունքն է կախվում,  
որպես մարգարիտ:  
Ամբողջանում է  
իմ տիեզերքը:  
Նայում եմ մորս  
և տեսնում խորանն Յակոբավանքի,

Իսկ ժամանակի ուսերը...  
 զոհասեղաններ են...  
 Միրզը հասնում է ելևէջներում արարչական ծայնի:  
 Արշալուսահամ  
 երազ է բառս:  
 Շուրթերս՝ համբույրից բխող անդրադարձ:  
 Հայացքս բույն է,  
 որից թևում են իղձերն երկնքի:  
 Ձյան փաթիլները հետքերն են լույսի:  
 Մայր իմ, քո համբույրն ինձ դարձնում է  
 մի ուխտատեղի:  
 Ես բախտն եմ օդի:  
 Բառերի միջև մերթ ես եմ կանգնում,  
 մերթ՝ իմ ստվերը:  
 Եվ արմատներիս խորքից լսում եմ  
 նվազն Անհունի:  
 Եվ ճյուղն իր բողբոջով համբուրում է  
 երկինքը սիրո:  
 Ես Անսահմանի բաբախող շե՛րտն եմ:  
 Իսկ դարի վարքը ինքնասպան է լինում  
 ընդերքում բառի:  
 Իմ վայրկյանները  
 բնակարաններ են,  
 անտանիք, անծեփ  
 բառերս մրսում են բառարանների  
 լաբիրինթոսում:  
 Համբույրների միջև զոհասեղան է  
 խոստովանանքս:  
 Իրերը տանջվում են առանց հայացքի:  
 Ես դեմքն եմ Ոգու:

Պատմության փոշին  
 լցվում է աչքերը դասագրքերի,  
 և հավատի ժամի ծաղկող մի ճյուղ է  
 տառը Մեսրոպյան:  
 Ես մինքն եմ լույսի,  
 տարածության հոգին:  
 Եվ տառապանքի աչքերի մեջ լցվող  
 լրնյս է իմ հասցեն:  
 Ես շրջանցում եմ  
 բունը սովորույթի:  
 Մաշված հայացքների անտերունչ կույտ է  
 այս հողաթումբը՝  
 ձակատագրիս արսնիրողը:  
 Իմ ներշնչանքը՝  
 բառերի համբոնյր,  
 որից սարսռում է երակներիս օրը  
 և լցվում ձովոյուններով հորիզոնների:  
 Ես իմ երազից ելնում եմ, ինչպես  
 ծաղիկը՝ հողից:  
 Եվ իմ կարոտի լրնյսն է ղղղանջում ոտնահետքերում:  
 Ես իմ փակուղին եմ:  
 Ինձնից ազատվելը  
 անհրնարին է:  
 Թեև լռության աստիճաններով  
 բարձրանում է  
 սովերը Քառսի,  
 ես համբուրում եմ  
 քեզ՝  
 հաստատելով  
 ներդաշնակությունը  
 ԱՆՅԱՍԱՆԵԼԻԻ:

### ԾԱՂԿԱՄԱՆԸ

Անհայտի պատուհանին  
դրված ծաղկամանը  
մորս հայացքն է,  
ուր աճեցնում եմ ծաղիկն արշալույսի:

\* \* \*

Վայրկյանների միջև հայտնաբերում եմ դեմքն  
Անսահմանի:

\* \* \*

Շարունակում եմ ես խոսել ինձ հետ  
մի բիբլիական ու հին կարոտով,  
խոսել բիբերի թաց անապատով,  
ուր ցավն է գերում, որպես աստղի հետք:

Ցավիս մեջ դարձյալ սուլում է հողմը,  
ո՛վ է ստվերիս խորքերում լռում,  
երբ անգոյության հեգնանքի վրա  
կեղևաթափվող տանջանք է հեռուն:

Իմ հիշողության զորեղ ճյուղերին  
մի աստվածային երազ է շողում,  
սերմն է խլրտում հավատի հողում,  
որ ճանապարհին է ոգու թևերի:

Չայացքս նետված ձեռնոց չէ, գիտեմ,  
հարություն առնող վայրկյան է դեմքս,  
շնչահեղձ լինող մի բառ է վերքս,  
և պտտահո՛ղմ է հոգիս հարատև:

Ինքնաորոնման սահանքի վրա  
իմ թռիչքային ստվերն է սահում,  
վերքերիս մութից աստղեր են հառնում,  
և գրչիս ծայրին միտքն է հողմահար,  
ձայնս պատռված կեղևն է լույսի,  
ձայնս՝ մագաղաթ, սարկոֆագ հույսի:

## ԵՍ ՏԵՐՆ ԵՄ ՈԳՈՒՍ ԼԵՌՆԵՐԻ

Չորս հայացքը մի բույն է կարծես,  
որ մնացել է ծառի կատարին,  
Անսահմանության անուրջ է, որից  
թափվում են ճռվողյունները հիշատակների:

Եվ իմ հուշերի լեռների վրա իջնող թևերը  
տիեզերական հրեշտակներ են,  
որոնք եկել են՝ վեր հանելու լույսն իմ հիշատակի-  
հրճվանքը աստեղային:

Եվ մի սանդուղք է հիշողությունը աստեղային,  
որով ելնում է լույսը կարոտի ու առեղծվածի,  
իսկ երազներիս արգանդից սահող ոգին թռչուն է.-  
ես տե՛րն եմ ոգու լեռների, տերն եմ այս տարածության,  
ես՝ անրջանքի սյունն աստվածային:

## ԵՐԿՐԻ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Երկրի սահմանները հուշարձաններ են,  
ցավի զսպանակներ,  
գուցե հիշողության զարթուցիչներ են,  
պատմության նիրհից արթնացող ոգու  
հիշատակարան...  
Երկրի սահմանները  
բռունցքներն են մեր,  
մեր նախնյաց ոգու հենարանները...  
Պատմության լուսից պայթող բողբոջները  
նահատակների երազանքներն են...  
Երկրի սահմանները  
կենսաճյուղերն են իմ Տոհմաժառի,  
որոնց վրա հասունանում են  
մրգերն Անսահմանի:

\* \* \*

ՍԱՅՄԱՆԱԳԾԵՐԻ ԱՓԵՐԻՑ  
ԲՈՒՍԵԼ Է ՄԻ ԱՄՏԴ...  
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԼԱՊՏԵՐԸ...



\* \* \*

Ցավի բներ չեն այս տանիքները,  
այլ աստվածային վիրակապեր են,  
սուրում են ոխի խոլ ստվերները,  
և, որպես կարմիր մրմուռի հետքեր,  
ընկնում են հողին նրանց պայտերը:

Իսկ ժամանակը արյուն է կարմիր,  
ծառերից ընկնող ձիչ է տերևը,  
և լռությունն է ոռնում մեղքերի,  
խաչքարի հույսը ընկնող արցունքն է,  
խղճի գիշերը անապատների:

Եվ տիեզերքի զարկերակի մեջ  
տրոփող ցավ է կռիվն այս անվերջ,  
ջարդերն այս մանղծ են, ուրվականի երթ,  
պատմության վրան ներխուժող չվերթ,  
կռիվն այս տենդ է հավատաավեր:

Ցավի բներ չեն այս տանիքները,  
այլ աստվածային վիրակապեր են,  
սուրում են ոխի խոլ ստվերները,  
և, որպես կարմիր մրմուռի հետքեր,  
ընկնում են հողին նրանց պայտերը:

## ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՈՆԵՐ

### 1. ՈԳՈՒ ՎԱՆԴԱԿՆԵՐԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՏՈՂԵՐԸ

Ոգու վանդակներից ազատվում են տողերը,  
որպես հրեշտակներ:  
Ժամանակը, որպես  
նժարը Ոգու,  
կշռում է Երկրի տատանումները:  
Եվ բառը դառնում է բևեռների բռունցք,  
խարիսխ հիշողության:

## 2. ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱԳԱԳԱԹՆԵՐԻ ՊԱՐԵՂԱՆԱԿ...

Իմ ձեռքերից բուսնում է առավոտը,  
որպես պարեղանակ լեռնագագաթների ...  
Ես բռնում եմ ձախրող ձեռքերով իմ  
ձակատագրի ճիչը  
և չրթում, որպես  
արևածաղկի սերմ:

### 3. ՀԱՆԴԻՊԵԼ ԿՆՈՋԸ

Հանդիպել կնոջը՝  
նշանակում է ենթարկվել աղետի,  
բայց ես գերադասում եմ  
անցնել ոգու միջով առեղծվածի...  
Հանդիպել կնոջը՝  
նշանակում է շրջանցել ինքդ քեզ  
և գտնել... Աստծոնն:



Նկարը՝  
Ալվարո Գոիգորյանի

## 4. ԻՆՉՔԱՆ ՀԱՐԱՁԱՏ-ՕՏԱՐՆԵՐՈՎ ԵՄ

Ինչքան հարազատ-օտարներով եմ  
ես շրջապատված,  
նույնքան էլ՝ օտար-հարազատներով:  
Այնպես որ ոչ-ոք չասաց՝ ծնվել ես,  
շնորհավոր քո ներկայությունը:  
Միայն հեռավոր մի դուռ ճռնչաց,  
և ես հասկացա,  
որ ապրում եմ, կամ,  
շրջապատված եմ օտար, հարազատ  
հիշատակներով...

## 5. ԲԱՌԵՐՍ ՈԳՈՒ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ՀԱԳԱՆ

Բառերս ոգու հագուստներ հագան,  
մրրկվեց վշտիս կայծակը հողում,  
իմ շրթունքների և ցավի դողում  
հավատով լցվող տարածություն կա...  
Ա՛խ, մենությունս թիակ էր նավի,  
և արթնացողը այս անգամ՝ ես եմ.  
բախվում եմ դեմքով կայծքարին ցավի  
և սփռում շուրջս լույս, ծաղիկ ու սեր:

## 6. ԲԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՄ

Գագաթների միջև հաղթահարում եմ զոհասեղանը ոգու:  
Դարերի միջով քայլում է այդպես Անսահմանի սերը,  
որպես սերմ ...  
Եվ բառերի զարկերակում վերածնվում է ժամանակի  
դեմքը:

## 7. Ո՞ՐՆ Է ԵԼՔԸ

Ժամանակի կեռերից  
կախված դեմքերը՝  
խորհրդանիշեր:  
Եվ վայրկյանների քարե ուսերից  
գահավիժում են  
կուռքերը երկրի:  
Արյունոտ էր բիրը ճանապարհի՝  
պատմության շեմը:  
Իսկ հիշատակի լույսը  
թռչկոտում էր վանդակում,  
որպես կապիկ:



## 8. ԲԱՌԵՐԸ ՀԱՄԱՌՈՐԵՆ ՏԵՍՆՈՒՄ ԵՆ ԵՐԱԶՆԵՐ

Բառերը համառորեն տեսնում են երազներ:  
Բառերը համառորեն փորում են խրամատներ:  
Բառերը ճամփորդում են ժամանակի միջով,  
դառնում զարկերակներ:  
Կյանքի ակնախոռոչում և եզրին անդունդի  
բառերը վառում են մոմեր հրաժեշտի...  
Եվ որպես գմբեթ սլանում են բառերը  
երկնքում Անսահմանի:

### 9. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ես հանում եմ շրջանակը.  
և մնում է կյանքը,  
որպես պատկեր:

Ես հանում եմ շրջանակը.  
և մնում է հույսը,  
որպես կամուրջ:

Ես հանում եմ շրջանակը.  
և մնում է ծառը,  
որպես հրդեհ:

Ես հանում եմ շրջանակը.  
և Տիրոջ դեմքն է լուսանում  
ձյուղերին Չարության:

## ՍԻՐՈ ԱՎԵՏԻՍ

## 1.ԵՐԲ ՆԱՅՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Լեռան գագաթին ծլում է լույսը,  
որպես Ավետին:  
Երբ նայում եմ քեզ  
կամ շոյում եմ  
վարսերդ,  
հուշերիս քաղցը հագենում է...  
Ազատագրված բառի ոգին՝  
Անհայտության մաս:  
Դեմքդ ստորակետ է:  
Աստծո հղած տողերի միջև  
շնչում է բառը:  
Ես համբուրում եմ  
ստորակետը քո շուրթերի...  
Չամբույրն աղբյուր է:  
Անհայտության  
մասն են քայլերդ:  
Չայացքիդ ծաղկաթերթին  
գրում եմ մի տող...  
Եվ լուսանում է բախտը  
թևին հորիզոնի:

## 2. ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԵՄ

Շրջապատված եմ  
սև ու սպիտակ կետերով՝  
գիշերով ու ցերեկով,  
և գոհանում եմ միայն  
այն ժամանակ,  
երբ կշռում եմ պահը  
իմ ափերով՝  
նժարներով հույսի,  
կամ էլ քո կրծքի  
ալիքով, վարսերի  
հախումն ալեկոծությամբ:  
Սեր է բխում տարածության  
փակուղուց: Ես քո  
աչքերն եմ համբուրում,  
որպես նորահայտ ակերն  
աղբյուրի: Դու մոլորվել ես  
իմ շնչառության քառսում...  
Ձեռքդ եմ բռնել...  
Եվ պատվաստվել եմք իրար մեջ,  
որպես  
մենության հրդեհ:

## 3. ՔՈ ՎԱՐԱԿԻՉ ՇՆՉԻՑ ԵՐԿԻՆՔՆ Է ԾԻԾԱՂՈՒՄ

Քո վարակիչ շնչից երկինքն է ծիծաղում,  
իսկ բառերս լցվում են համբերությամբ ողկույզի,  
երբ լսում եմ մարմնիդ մեղեդին,  
վերստանում եմ  
աստվածային ռիթմեր:  
Դու շարժվում ես շուրթերիս,  
որպես լույսի անուն:  
Չաղորդության  
շենն է քո հայացքը:  
Իսկ քո զգեստի ամեն ծալքի վրա  
ուշաթափվում օրը  
և սթափվում է  
մատներիս տաքուկ շոյանքներից...  
Եվ ավազի միջից մի լուսայգ եմ հանում,  
սփռում մարմնիդ վրա,  
և դու լսում ես ավազահատիկների հեքիաթն աստեղային:  
Եվ քո արգանդի հյուլեում անհայտ  
գոյանում է գարնանային մի լույս,  
արարվում է երգի  
մի նոր մոլորակ:

## 4. ԵՎ ԲԱՑՎՈՒՄ Է ԼՈՒՅԱԸ

Մութ էր: Անձկության  
պատը շրջանցում եմ  
և գնում դեպի  
ստվերները զիզզազի...  
Արարվում է մի դեմք,  
մի շունչ, մի երազ  
ծիծեռնակի թևերի տակ:  
Մանկության քարի ոգևորությամբ  
հագեցնում եմ ծարավը բառերիս...  
Մի խոսք  
փաթաթիր պարանոցին քամու,  
որպես վիրակնապ:  
Եվ ամբողջացրու լռությունը ամենայն  
Սկզբի:  
Դու, որպես ասուպ,  
գլորվում ես գիշերվա  
թարթիչներն ի վար,  
իսկ ես ըմպում եմ քեզ...  
Եվ բացվում է լույսը...

\* \* \*

Լեռան ուսերին աչքերս թարթվում,  
Ճերմակ ծվեն են մաղում երագի,  
Եվ լռության մեջ լսվում են հագիվ  
Մի քանի շարժում տաք ու կիսարթուն:

Քո ձայնի խորունկ հետքերի վրա  
Մանկության բակի հայացքն է քնած,  
Իսկ թե արթնանա՝ կլցվի հոգիս  
Ելևէջներով աստեղահամայք:

Եվ հիշատակի լույսն, ինչպես խաչքար,  
Եվ մի հառաչանք՝ «օ, սեր իմ, սեր իմ...»,  
Կպարուրեն ինձ աղոթքով վերին,  
Կսնուցեն ինձ, գգվեն մայրաբար...

Լեռան ուսերին աչքերս թարթվում,  
Ճերմակ ծվեն են մաղում երագի,  
Եվ լռության մեջ լսվում են հագիվ  
Մի քանի շարժում տաք ու կիսարթուն:

## ՏԵՍԼԱԺԱՄ

1. Մենակության գորգը ավլում եմ  
թևով թռչնակի,  
և փայլում են թելերը հույսի,  
և ճակատագրիս մրուրն ուտում է  
Անհայտի շեմը:  
Փխրեցնում եմ ժամանակի հողը:  
Եվ արմատ է նետում երկինքը նորից  
պտտահողմում Միֆի:
2. Տառապանքի քարտեզից ժայթքում է մի բառ`  
անունը տառապանքի,  
որ երեք տառ է` սեր:
3. Եվ հրդեհվում է վարագույրը Մեղքի:
4. Եվ պատվանդանն այս,  
որից ընկել է կուռքը,  
ծառ չէ կտրված,  
այլ պարզապես` զնդան,  
ուր ծեծվում ու կոփվում է իմ ճանապարհը,  
ուր ծեծվում ու կոփվում է... ճշմարտությունը:



## ԴՌՆԵՐԸ ՔԱՄՈՒ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

**Արդյոք դարպասը մշտապես  
այդտեղ է եղել, թե նոր է հայտնվել:**

**Յերման Յեսսե**

Կորցրել եմ հասցեն անապատի քամու:  
Նայում եմ քաղաքի փաթաթան-մշուշին,  
տեսնում, թե ինչպես է հանկարծակի ընկնում  
դատարկությունը վերին հարկերից: Ձայնս  
շրջանցում է ետնաբակերը սովորույթների,  
որտեղ ապրողը իմ երկրորդ ենն է, գուցե և՛  
երրորդ կամ հազարերորդ... Ո՞վ գիտե...  
Ես-ի շերտերում երկինքներ կան բյուր,  
որոնք ամպրոպի կաթը ըմպում են  
ուսերից Քիրսի... Գետի ընթացքը  
ծանրաբեռնվում է ուռկանով, քարով,  
մեռյալ աշխարհի ուրվապատկերով...  
Սա իմ երկիրն է: Իսկ անապատի  
թևերը բախում են դռները քամու  
և ազատության...

\* \* \*

Ազգ իմ, քո ձայնը տարերք է գծում  
Ժայռերին ոգու, աստղերի վրա,  
Ամեն մի խոսքդ խորանն է Աստծո,  
Ամեն երազդ հատիկ է նռան:

Չերոսական լար ու աստղի նվեր,  
Փրկության ալիք ու ելքի հասցե,-  
Ոգու ընթացք է այս ճանապարհը,  
Որ տարերքների սահմանն է անցել...

Չողից ելնում է հրայրքը ցեղի,  
Եվ հորովելի երկինքն է հոսում,  
Եվ տիեզերքը տենչի ակոսում  
Վերածնվում է լույսով կանթեղի:  
Ազգ իմ, քո ձայնը՝ պտտահողմ Ոգու,  
Չիմնդ խորան է, լրյս է ամեն տող...

### ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԺԱՄԻՆ

Երբեմն տողս անիվի պես գլորվում է  
իմաստների վրայով  
անդրժամանակի:  
Եվ կնճիռներում հիշողության  
թփրտում է շանթը հույսի:  
Աննպատակ, անձայն, անլուր  
միջավայր է Յավիտենությունը:  
Երբ քայլում եմ հայրենիքում,  
շնչով դիպչում եմ  
եզրին Առասպելի...  
Եվ ոտնահետքս՝  
հիշողության ջահ է:  
Եվ երկնքի ձեռքերն ի վեր  
ծլարձակող հող է բառս-  
Անհայտության աստղը...  
Արթնացումն է շողարձակում  
գագաթներից:

## ՄՅԵՐԻ ԴՈՒՈՐ

Իմ չգրած տողը...  
դուռն է Միերի:  
Ոտնահետքերս՝  
մատենագրեր:  
Կարոտներիս սալերը ծածկված են  
եղյամրվ հուշերի:  
Ուտում եմ հույսերի  
մոխիրը սպիտակ:  
Դեմքս հավաքվում  
և փշրվում է  
ամեն առավոտ,  
կեսօրին դարձյալ  
ձգտումների նոր ցանցն եմ ընկնում,  
տարվում երազի  
փայլատակումով,  
իսկ երբ գիշերն է ծանրանում խոհիս  
մայթերի վրա,  
ինչ-որ դիմակի ծվեններ են  
հալածում ինձ,  
Տեր...  
Լռության դեմքն է տեղաշարժում  
օդը կայծքարե...  
Կյանքի բեմերից հանված  
վարագույրն

աղբանոցն իբրև դրոշ է պարզել...  
Անտարբերությունն՝  
համատարած վիհ...  
Բախվում եմ անընդհատ  
կայծքարին Ցավի:  
Իմ չգրած տողը...  
դու՛նն է Միերի...

## ԻՆՔՆԱԶՆՆՈՒՄ ԱՆՑՆՈՂ ԵՎ ԵԿՈՂ ԺԱՄԵՐԻ ՄԻՋԵՎ

1

Երկրի և երկնքի միջև արարվում է դեմքս:

2

Երբեմն խոսքը ելնում է  
ոգու բարձունքներն ի վեր,  
չհասնելով սակայն  
ցանկապատին լռության:  
Ես ուտում եմ եզրը Անհայտի,  
որպես պաղպաղակ:

3

Երգիս ծնունդը  
սրբազան ուխտի մի ճանապարհ է,  
որի ընթացքը երբեք չի շեղում  
տպագրական մեքենան՝  
Ոգու մամլիչը անգամ:

4

Ոգու ցերեկ է  
իմ ամեն բառը,  
ուր բարուրվել են տառապանքներիս  
գիշերները:

5

Սպունգ-քաղաքը  
ներքաշում է  
մենակությունը ծառի:  
Եվ ծաղկում են հեռվում  
թևերն հիշողության:

6

Եվ իմ ասիերից  
անապատների ծարավն է բխում...  
Բառս աղբյուր է,  
ճանապարհորդ է ամեն վայրկյանս...

7

Երազ կա՝  
բացում է աչքերն անապատի:  
Եվ լռություն կա՝  
ընդվզում է կարմիր:

8

Արյունս ո՛չ թե ապաստարան է,  
այլ սահմանը խղճիս:  
Մոխիրով լվացված մի սալահատակ է  
դեմքս,  
որի վրա խաղում են մանկությունները...

## ԱՐՏԱԿԱՐԳ ԵՂԱՆԱԿ

Դու ինձ մոտ եկար:  
Եվ ցավից հառնող մի ճանապարհ է  
օրն այս կապարե:  
Շշուկից բուսնող վաճիկ է հայացքդ:  
Է՛հ, ստվերների միջով վերադարձող  
մի քարավան է հիշողությունս:  
Քո շուրթերի միջև վերածնվող երանգ է  
իմ փրկությունը:  
Ես շոյում եմ քեզ,  
և մաշկիդ տակ ծնվում է  
երկինքը վաղվա.  
Ես նայում եմ քեզ,  
և արյանս մեջ բացվում եմ մանուշակները...



## ՈԳԵՅԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԸ

1

Գրիչս

շրջանցում է

արգելանոցը տաղաչափության

և գրում ոգու թևերի վրա:

Շնչառությունս՝

շերտ առեղծվածի:

Ես աստղի պես

անցնում եմ

հիմքերով հիշողության

և լուսավորում

ճանապարհը

մանկության:

Միֆը

լույս է,

որի մեջ ապրում եմ,

որպես բացառիկ հյուր:

Աբսուրդի ակունքը

իմ ընտրած բանն է,

իսկ ինձ ընտրողը՝

ոգին Անհայտի:

Եվ թռչունը,

թփրտալով

հայացքիս բնում,  
 հարություն է առնում  
 անդրժամանակի  
 թևերի վրա.-  
 թռչունն իմ տողն է,  
 կայանն Անսահմանի:

2

Լույսի կեղևն է ընկնում  
 վարագույրի նման:  
 Պատմության զոհասեղանին  
 վառվող մոմեր են  
 ընթերցողները:  
 Բառը զսպանակ է,  
 որ հրում է իմ ոգին  
 հորիզոնն ի վեր...  
 Փոխակերպությունն  
 իմ ապրելակերպն է:  
 Մի նոր  
 սկիզբ է ալիքվում  
 հորիզոնն ի վեր...

3

Աբսուրդի հորիզոններում  
 նորոգվում են  
 բեմերը Անհայտի:  
 Չողի հայացքն անցնում է  
 շնչառության միջով  
 բանաստեղծի  
 և պայթում,

որպես բոբոջ:  
Աշխարհի երազն՝  
արյունոտ  
փետուր,  
որով գրում է իմ ճանապարհը...  
Մի նոր սկիզբ է  
իմ տառապանքը...

4  
Ճակատագրի բեկոր,  
որ մրջյունն ուսած՝  
տանում է  
ճանապարհն ի վեր,  
որպես  
հոգեպահճիւտ:-  
Եվ սերնդեսերունդ  
փոխանցվում է ժամը  
Ոգեհայտնության:

5  
Ճակատագիրն  
ըմպում է իմ ափից  
լուսայգը  
երկրի:  
Եվ ես դողացող  
ձեռքերով  
հավաքում եմ  
կերևները պատրանքի  
և լիզում ճառագայթը  
ապագա

ըմբռնումների:  
ճանապարհը  
կախվել  
կեռից պատմության,  
շողում է, որպես միրգ:  
Իսկ Անի քաղաքի  
ամայի կամրջին  
միավորվում են  
բևեռները Ոգու:

## ՀԱՄԱՌՈՒՅՐԸ ԼՈՒՅՍԻ

1

Սեր բառի խորքից ելնում է մի բոց,  
մեղքից կաթում է բողբոջը լույսի,  
մի վերջակետ է ժպիտը կույսի,  
թե՛ ճակատագրի միջանկյալ հևոց...  
Ես դուռն եմ բացում երազանքների,  
ծեռքիս լապտերը՝ հիշողությունն է,  
ամեն բառ հոգուս երազած տունն է  
և տեսադաճը լեռնապարերի:

2

Ես համբուրում եմ  
երկնքի ճակատը փետուրով հույսի:  
Եվ կորուստների  
թիրախը նորից բողբոջն է բախտի:  
Իմ աչքից ընկնող  
մի կափարիչ է բառն այս անհարկի:  
Ինձ որպես խորան  
անհրաժեշտ է միշտ համբույրը լույսի:  
Ես համբուրում եմ  
երկնքի ճակատը փետուրով հույսի:

## ՆՈՐ ՏԵՂԱՆՔ

Սերը պահումստն է իմ տեսողության:  
Եվ թռչունները  
ստվերիս վրա  
աստղերի երկնքոտ սերմերն են կտցում...  
Եվ փողոցը (ծայրեծայր կամ թե մասնակի)  
իմ ոգու դեմքն է:

## ԱՆՏԵՍՎԵՑ ԻՄ ԵՐԱՋԸ

Անտեսվեց իմ երազը,  
և ես դարձա ստվեր:  
Թեև շարունակեցի ապրել  
իմ կորուստների զսպաշապիկում  
և սփոփանքի չոր տերևների միջով  
քայլեցի, որպես մենակության դուռ...  
Իմ կնճիռներից  
ցայտեցին լույսերը  
անհայտության խոր անդունդներն իվար:  
Ձայնիս ժամանակը  
տանիքն է բառի:  
Ուրվականի պես  
ես անցա բառի պատերի միջով  
և այդպես էլ ինձ չհանդիպեցի...  
Ես վերադարձա: Ու քեզ չգտա...  
Չանկարծ հասկացա,  
որ մնացել է իմ կյանքը հեռվում,  
հնարավոր չէր ինքս ինձ հանդիպել,-  
և իմ աչքերում լալիս էր վաղը...

## ԿՈՄԻՏԱՍ

Քո կոպերը երևի բների պես են փլվել.-  
վիրավոր է թևերից բախտը - դաժան մի նվեր...  
Եվ կոպերիդ մթան մեջ ապրում է մի աքսորյալ,  
որի տանջանքն է անվերջ, սփոփանքը՝ մի խոնավ  
անուրջ: Խորքից հայելու դու ձայների դեռ ինչքան  
պահուստներ ես հանելու՝ զարդարելու համար այս  
կյանքը: Քո վեհ ծակատից հղացումներն են թևում,  
և քո ցավի խորանում պատարագներն են տևում  
այնքան, մինչև Կռունկի «խաբրիկն» ընկնում վերևից,  
բացում է նոր ասպարեզ հայահաղորդ թևերի...  
Դու Մասիսի ձյունաբույր երազանքներն ես բացում,  
երգդ՝ տարերք, հովի շունչ ու երկնային տաճ արցունք:



## ՍԻԱՄԱՆԹՈ

1

Առեղծվածի ձյունն է հալչում փաթիլ-փաթիլ  
քո մոգական խոսքի շեղբին զրահակիր:

Ամնւր է տողդ՝ հանց նախշը որմնաքարի,  
Անգուսպ՝ որպես դարի ընդվզումը կարմիր:

Երկրի մեղքն է ճչում հույսի կապույտ ափին,  
Ոգուդ լույսը խառնվում... երակների ծափին:

2

Դու՝ առասպելյան ներշնչանքի մոգ,  
դու՝ գաղտնիքի լաց ու մրմուռի հոսք,  
տեսիլքի աղոթք, թռիչքի հատակ,  
վշտաբուխ խոսքիդ խաչված մարտիրոս:

## ՅԵՏԱԳԻԾ

1

Ինքնաստարման մի բևեռ է, Տէր,  
լռությունը այս,  
ուր ես ոտք դրի.-  
հոգեվարձում էր իմ սկիզբն իմ վերջի  
տաք ճիրաններում:

2

Անունս ծաղկում էր իբրև ճյուղ հոնի  
և իբրև բուրող մի տարածություն:  
Ահա մի համբույր, որին հենվելով՝  
լույսը չի կորցնում հաղորդությունը:

3

Բառերը գուցե նրա համար են,  
որ հոգուս անհուն լռությունները  
վերստանան անուն, դիմագիծ ու ձայն:  
Յաղոդության հոգին ասպարեզ է զորեղ:

4

Բառերն իմ հոգու խորքերը նայող  
ճանապարհներ են...

## ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆ

Կանգնել եմ իմ դիմաց,  
որպես ստվեր կամ  
խորհրդանիշ մեռած:  
Եվ ժամանակն է պահածոյացել,  
դարձել լեռն ի վար գլորվող մի տուփ:

Քո ծնկներից ըմպելով  
լրնյսը ճանապարհի՝  
հասա դռներին հույսի:

Մաշված հայացքների կույտն էր  
գլորվում  
կատվի նման  
մոռացության գորգի վրայով:

Ծիլը նորության խորհրդանիշն է,  
որն իր առաջին հայացքն է  
փոխանակում,  
ցողոտ հայացքը՝  
ծառի, քարի հետ:  
Երկվության ժամն է:  
Եվ «ոչ մի տեղը»  
իմ բախտի շեմն է...  
Ես... լուռ մնացրորդն եմ իմ հիշողության,  
թե ապագայի  
արձագանքը քարե:

## ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՐԳ

Գուցե օրը ունի երազային բառեր,  
գուցե օրը ունի երջանկության կղզի,  
ամեն դուռ բացելով ես ասում եմ՝ բարև,  
ամեն ծիր մի գիրք է՝ անակնկալ կազմով:

Թուխս է նստել կարծես բառը բառի վրա,  
ծնունդների ոգուց ալիքվում է մի ձայն,  
բառարանը, որպես մի հանրակացարան,  
պատուհանն է բացել՝ մղվելով դեպի կյանք:

Ճանապարհը, որպես «Շամպայն» գինու խցան,  
դուրս է թռչում մութից՝ ողջունելով մարդկանց,  
անցած օրը արդեն շերտ է հիշողության,  
անցած տարին՝ նեցուկ ու ջերմ խորհրդական,  
կյանքը դեմքն է բացել՝ անհայտության քարտեզ,  
կյանքը նույն երաճն է, թե... փոխվել է ինձ պես:

\* \* \*

Ոգու ծերպերին  
ծեր շունչն եմ վառել,  
կայծքարե բառեր...

Եվ փոփոխվել է  
մթնոլորտն ինչո՞վ.  
Անհայտի ծիչով...

Ներշնչանքիս հողում  
խլրտում է տողը՝  
ցավին հաղթո՞ղը...

Եվ ամբողջանում եմ  
բառի ծրագով  
և... տիեզերքո՞վ:

## ԱԼՊԻԱԿԱՆ ԾԱՂԻԿ

Եվ մասնատվում է  
Ժամանակը շերտ-շերտ,  
հագուստների պես  
դարսվում իրար վրա:

Ո՞վ է առանց բաճկոն  
շրջում այս ցրտին.  
նա անդրադարձն է  
մի այլ մոլորակի:

Եվ իմ դեմքն է դառնում  
(գրչիս ծայրին՝ արյուն)  
այդ շերտերը ձեղքող  
ալպիական ծաղիկ:

### ԵՂԵՐԵՐԳ

Մութ էր և տառապանք,  
կոպն էր փակվում ցեղիս:  
Ճանապարհի վրա  
մաղվում էին լուսնի  
քրքիջները դեղին:

\* \* \*

Կյանքս՝ վաղուց ի վեր տառապանքի մամոնտ,  
կանհետանա՝ թողած իր ետևում մի վիհ,  
իսկ հորիզոնն, ինչպես բոցկլտացող մի մոմ,  
կլուսավորի երկար խորաններն իմ ցավի:

\* \* \*

Տողերս փնտրում են լույսը տարածության,  
որպեսզի արթնացնեն խորհուրդների ոգին:  
Տողերս հավատամքի դռներն են բացում  
դեպի խորքն իմ ոգու:-  
Երբ հասնում եմ ես ինձ...  
հիշողության ասուպ-  
լռությո՛ւնն է երգում:  
Տողերս փնտրում են լույսը տարածության...



## ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԺԱՄԻՆ

Թուղթը գերում է ինձ իր ճերմակությամբ,  
թուղթը հուզում է ինձ Անհունների մտքով,  
տարածության փեղկից նայում է ինձ մի ցավ,  
մի տառապանք աղոթում Ապագայի երգով:

Եվ իմ ճանապարհից ծագում է մի երագ,  
հորդում, ինչպես աղբյուր, տեսողության բևեռ,  
բառը դառնում է կյանք, գոյատևման եզերք,  
լապտերի պես ուշիմ ուղեկցում է ինձ մի վերք:

Ես իմ ձայնն եմ պոկում վիրակապի նման  
կյանքի բուժված ափից և լվանում ցողով,  
իսկ երազից այն կողմ՝ մի նոր խրտվիլակ  
կրճ է դառնում, օժվում ներշնչանքի դողով:

Թուղթը գերում է ինձ անհայտությամբ վերին,  
թուղթը բացում է ինձ հիշողության լույսով,  
և ջարդելով արժաթե հայելին սովորույթի՝  
մի նոր դուռ եմ բացում, մի «Առավոտ լուսո»:-

Կանգնում եմ իմ դիմաց, որպես նոր մոլորակ,  
ապակու մեջ ծաղկում, որպես հույսի արցունք,  
հոր պես ընդունում եմ ն բառը մոլորյալ,  
օրհնում վերադարձը և «անառակ որդու»:

Թուղթը գերում է ինձ իր ճերմակությամբ,  
թուղթը հուզում է ինձ Անհունների մտքով,  
տարածության փեղկից նայում է ինձ մի ցավ,  
մի տառապանք աղոթում Ապագայի ելքով:

## ԼՈՒՅՍԻ ԵՎ ՄՈՒԹԻ ՊԱՂ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Լույսի և մութի պաղ խաչմերուկում  
սիրո երազն է կրկին արթնացել,-  
գուցե վերելք է սա, ոչ թե անկում,  
գուցե լուսինը իմ սիրո բարձն է:


Ապրելու համար նորություն է պետք  
և իրերի նոր իմաստավորում,  
սեր բառը, արդյոք, փակուղի՞ է, թե...  
հորիզոնում նոր ելք է նշմարվում:

Իմ ներսում ինչքան կորագծեր կան,  
ոգու զիգզագներ ու թևաբախում,-  
ի՞նչ կբերի ինձ հուսավառ ներկան,  
ո՞վ է հեռվից իմ անդորրը խախտում:

Լույսի և մութի պաղ խաչմերուկում  
սիրո երազն է կրկին արթնացել,-  
գուցե վերելք է սա, ոչ թե անկում,  
գուցե լուսինը իմ սիրո բարձն է:

## ԱՆԱՍԵԼԻՆ ԻՄ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ Է

Եվ տարածության ձեռքերով  
գրկում եմ բարուրդ լռության  
ու փայփայում, որպես հուսաթրթիռ  
մանկան: Ներշնչանքի ծիր է  
ձիչը Անհայտի: Խոսքն  
անդրադարձն է հոգու,  
որ հառնում է ահա  
թևից հրեշտակի:  
Երջանկության փողոցն  
իր աչքերն է բացում  
և հավում ինձ մանկության  
թարթիչներով: Ես  
թիկունքն եմ Անհայտի,  
թե նրա անցնելիք ճանապարհը:  
Գուցե  
դժուռն եմ գաղտնիքի:  
Ես ոգին եմ բառի,  
թե... ասելիքի ընդհանրացնող  
լռայունը... Կամ  
և չկամ: Անասելին  
իմ թիկունքում է: Ես  
նրա դիմագիծն եմ,  
թե երևացող մասը...



**ԵՄ ԻՄ ԵՐԱՋՆ ԵՄ**

**Դա բոլորովին մի այլ ժամանակ է:  
Դրա մեջ կարծես ես համոզվում եմ,  
երբ ձեռքս եմ առնում հանկարծ գրիչը,  
կամ գրիչն է ինձ հափշտակում նորից,  
գրելով դարձյալ  
բիբով ժամանակի...**

## ԱՍՏՂ

Որոնման կետ է  
իմ գրիչը,  
հիշողության խարիսխ:  
Յոգեդարձի խորքից  
Ժայթքող երանգ է  
իմ գրչածայրը,  
կարոտի հետագիծը:  
Յայրս,  
հեռանալով,  
իմ ձեռքում է թողել  
այս փետուրը՝  
տեսողության ոգին,  
որով միավորում եմ  
բևեռները  
Աստղի:

## ԱՆՅԱՅՏԻ ՃԻՉՈՎ

Անորոշությունն հաղթահարվում է  
վերելքներով օդի:  
Դու հեռացար մինչև անտարբերության դուռը,  
քարշ տալով հայացքիս դին  
փողոցներով,  
որտեղ ամեն իր,  
շարժում ու նվագ  
անդրադարձներն են  
հոգու հարության:  
Սակայն իմ շունչը դրոշ չէ, սեր իմ,  
որ տնկելով բարձունքում այս, ասեմ.  
«Ես հասա այստեղ: Օրը բարձրանում էր»:  
Իմ շունչը ոգին է  
վերածնվող բառի,  
որ համբույրով է փոխանցվում  
մտորումներիդ  
աստղային ելքին:  
Երազների ձիչ է  
դուռը լռության:  
Եվ վերափոխվում է  
հայացքը կյանքի  
Անհայտի ձիչով...



## ՅՈՂՈՒՄ ՉԱՍՓՈՓՎԱԾ ՅԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ

Գոյությունս մի բնակարան է՝  
ինքնաորոնման հայելիներով  
և պատուհանով, որ իմ երանգն է,  
դռնով, որ դեպի աշխարհն է բացվում...

Տան մեջ ես ներկա և բացակա եմ,  
իսկ թախիծն ապրում անկոչ հյուրի պես,  
մերթ՝ եղբայր է, մերթ՝ մարդասպան Կայեն,-  
մահն իր հարվածով դեռ չի վրիպել:

Կյանքս անցնում է երազի կողքով,  
երազն անցնում է մոտերքով կյանքի,  
որպես ապսպրանք ու հետզրություն,-  
գուցե չեմ եղել, կամ ճակատագրի  
ափում եղել եմ պարանպ սերմացու-  
հողում չամփոփված հավիտենություն:

## ԿԱՐԴԱԼՈՎ ԷՋԵՐԸ ԵՐԱԶԻ

Ամեն անգամ  
մենակության վարագույրը  
բացելիս՝  
փոթորկված սիրո  
մի ջանի է ընկնում...  
Դու իմ աչքերում  
կարդում ես  
էջերը երագի,  
իմ շուրթերից  
ըմպում լուսաբացը հողի...  
Ես ինձ կորցնում եմ,  
թե գտնում եմ ինձ...  
Աստծո շուրթերին:

\* \* \*

Բառը ակունքն է իմ ճանապարհի:  
Մի երազ է անցնում միջանցքով Անհայտի:  
Մեսրոպյան ոգու ակունքն է լույսը:  
Իմ գրչի ծայրին (օրն արևոտ է)  
պայթում է բողբոջը՝ ծաղիկն Անհունի:

## ԵՎ ՑԱՎԻ ՃՐԱԳՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԻՆՁ

1

Իմ և Աստծո միջև հիշողության դրոշմն է,  
որը բացվելիս՝ լինում եմ ես հեռվում,  
իսկ երբ մոտենում եմ՝ դուռն այդ կողպված է,  
իմ և Աստծո միջև... ներշնչանքի լույսն է:

2

Բառարանը մի լաբիրինթոս է,  
որից ամեն բառ ձգտում է մի օր  
ազատագրվել:  
Բառերը տանջվում են առանց հայացքի.-  
տուր իմ դեմքը նրանց,  
թող ապրեն ոգուս դիմագծերով...  
Բառարանը մի լաբիրինթոս է...

3

Եվ ցավի ճրագն առաջնորդում ինձ,  
տանում է կյանքի վայրիվերումով:  
Չետո քանդում եմ բառերի միջև եղած  
միջնորմը, ստանում  
ասպարեզ:-  
Օ, ինչ պարզ է  
գրել ազատության հայացքի վրա...  
երբ ճանապարհի պես տողը ժայթքում է...  
Եվ ցավի ճրագն առաջնորդում է ինձ...

## ԱՆԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ես այս աշխարհի չըմբռնված խաղն եմ:

Չոգիս բախվում է սովորույթի մերկ ցանկապատերին:

Իմ ներբանները համբուրող քանի՜ առասպել ու կանչ...

Եվ սլանում են տողերս տենչի ողնաշարն ի վեր-  
անիրական կյանք:

Ես անցնում եմ իմ միջով,

որպես աշխարհի չըմբռնված մի խաղ:

## ԵՍ ԻՄ ԵՐԱԶՆ ԵՄ

Ճանապարհի աչքից ընկնող արցունք է այս ստորակետը:  
Իմ վերջակետը՝ եղնիկի աչքեր,  
որոնք հատում են սահմանն Անդիի:  
Ես միանում եմ բացվող շերտերին հորովելների:  
Ես շրջանցում եմ ցանկապատերը վայրկյանների  
և մխրձվում ոստայնի մեջ բուրմունքների:  
Ես իմ երազն եմ:  
Իմ թախիծների քղանցքների միջից  
շատրվանոն է նվազն անտառի:

\* \* \*

Ես այն բառն եմ, որ հարդարում է  
գիշերը վարսերիդ  
և նրա մեջ աճեցնում շուշաններ հույսի...  
Ես շոյում եմ քեզ,  
և մատներիդ ծայրերին հասունանում է  
լույսը...  
Երեկ ծնկներիդ հույսն ընթերցելիս՝  
շուրթերս դարձան  
փոթորկված գծեր,  
իսկ համբույրներս՝  
քո պարանոցին թփրտացող ձկներ...

\* \* \*

Իմ շարժումները՝ մասնիկներ շողի,  
ես լուսանում եմ և մթնում նաև,  
նայած թե ո՞ւմն է գիրը հաղթողի,  
ո՞վ է իմ հոգու խորքերը նայել,  
որ ամբողջանամ սիրով Տեսնողի...

Իմ շարժումները՝ մասնիկներ հողի,  
ես ուրախանում, հրճվում եմ նաև,  
երբ երկինքն է տող՝ աստղերով հղի,  
երբ ծիածանը հոգուս թիթեռն է,  
և գերակա է սերն Արարողի:



\* \* \*

Յույսը՝  
հոգու խորխորատից ելնող  
մի շնչառություն,  
որ շրջապատում է բնակավայրը...  
Մեզ դիմավորողը  
ասուպն է Լեռան:



Նկարը՝ Կամիլայի

ՉԵՌԱՑՈՂ ԱՍՏՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Չուշերիս փխրուն  
նշխարներն եմ լցնում  
գրպանները աշնան:  
Կորցրել եմ բանալին անհայտության:  
Այսուհետ  
ստվերիս խորհրդատուն եմ  
և ընկերը քարի:  
Այսուհետ...  
ինքս իմ ապրումների հյոհուն եմ...  
Իմ ստվերի լույսը:  
Փողոցի դեմքով սահող արցունքը:

\* \* \*

Իսկ ձնծաղիկի խավար ուտքի տակ  
բացվում է լույսը  
իմ մենակության:  
Չետո հեռավոր երկնքի ներքո  
լուսանում է ցավը,  
դրպես ճանապարհ:

\* \* \*

Եվ նոր կյանքն է բախում դուռդ,  
Եվ դիմացդ՝ բացվող օրն է.  
Աշխարհային մի լուրթ երազ,  
Երազային համան մի կյանք:

\* \* \*

Ես ներշնչանքն եմ,  
և լուսաբացի սահմանը հասող  
ասոնպն եմ ոգու...  
Ես՝ անմնացորդ այրում ու խորհուրդ,  
ես՝ շարժում տառի,  
մարդ բառի շավիղ...  
և բացվող դրնուղ այս տիեզերքի...

«ՇՈՒՇԻ-ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ» ԵՐԹՈՒՂԻՆ

Ընտրում եմ ռիթմը ընթացքից:  
Այսուհետ ազան է իմ բառը:  
Ազատվիր հանգերից անհարկի,  
և կմոտենան շարժմանը Ոգու:

Ոլորապտույտ այս ճանապարհը  
Օրորում է դեռ հուշը ֆայտոնչու:  
Չայացքիս ճյուղին թառած հավքերը  
Չանկարծ վե՛ր թռան ու կորան: Ինչո՞ւ:

Այսուհետ ազան է իմ տողը:  
Չետևում... անդունդն է պատմության:  
Ոլորապտույտ այս ճանապարհը  
Ազատվեց հուշից ու անէացավ:

## ԳՐԻՉԸ

Բառով

ես գտնում եմ դուռը ժամանակի,

իսկ բացել այն կարողանում

միայն իմ ոգով:

Անհայտությունն

իմ բնակարանն է՝

սեղմ դուռն Անհունի:

Դա բոլորովին մի այլ ժամանակ է:

Դրա մեջ կարծես ես համոզվում եմ,

երբ ձեռքս եմ առնում հանկարծ գրիչը,

կամ գրիչն է ինձ հափշտակում նորից,

գրելով դարձյալ

բիբով ժամանակի...

\* \* \*

Ուռկանի ստվերներում  
թփրտում է երկինքը,  
ինչպես հայրենիքս՝ անհայտության գրկում:  
Ազատությունը իմ հատու սուրն է.-  
սրի շեղբից հոսում է աղբյուրը Ոգու...

\* \* \*

Իմ ոտնահետքը,  
լցվելով շնչով առասպելների,  
բացվում է, որպես  
արևածաղիկ:

\* \* \*

Չիշողության ոգու տեսիլաժամին  
Ճակատագրի հայացքը  
մի վերջակետ է,  
որը թո՛ւխս է նստել  
լռության վրա մի այլ ժամանակի ...  
Չիշողության ոգու տեսիլաժամն է...

\* \* \*

Աչքերիդ խորանում  
վառվող մի մո՛ն է  
իմ ժպիտը: Այսուհետ՝  
ես քո ուխտավորն եմ,  
իսկ մեր համբույրը՝  
հոգուս աղո՛թքը:



\* \* \*

Սիրահարվել  
են մայրերը:  
Ոտնահետքերս  
գժվում են  
մանուշակաբույր  
քայլաձգներից:  
Ուր որ է՝ կբռնկվի՛  
սարսուռիս ծովը:

\* \* \*

Չայրս ապրում է երկինքներում հույսի:  
Ես շնչում եմ նրա դիմագծերի բույրը,  
ըմպում լույսը Ոգու.-  
Անհայտի ծիրով  
ամբողջանում է իմ տիեզերքը:

\* \* \*


Օրը տարածում է իր ջերմությունը  
բնակարանում  
և պարտեզում հոգուս,  
ուր ծաղիկներ են բացվում...  
Իսկ ես մենակության սահմանը հատելով՝  
ըմպում եմ երկնքից լույսը ճակատագրիս:

## ՅԱՎԵՐԺԻ ԴՈՒՈԸ

Աշխարհը դադարում է,  
գուցե և՛ վերանում  
իմ աչքերում,  
երբ շուրթերիս արթնանում են  
համբույրներդ:  
Իմ կարոտների ջրվեժներում  
շնչասպան են լինում  
ձանապարհներդ:  
Իսկ քո վարսերից  
ալիք-ալիք հոսում են  
գաղտնիքները  
Անսահմանի:

## ԱՆՅԱՅՏԻ ԷՋՈ

Մենակությունս շնրտ է լռության,  
թե դուռը տիեզերքի:  
Եվ սրբազան ուխտի մի ճանապարհ է  
իմ ամեն բառը:  
Եվ անմնացորդ այրում է հոգիս:  
Լաբիրինթոսում ինձ ուղեկցում է  
լապտերը ստվերիս:  
Իմ ամեն քայլով  
հաղթահարում եմ ճակատագիրը:  
Չատել սահմանը՝ նշանակում է  
վերածնվել: Ինքդ  
քեզ հաստատել:  
Կարոտիս սարսռուն լարերի վրա  
բացվում է օրը: Եվ հետզհետե  
արմատ եմ ձգում իմ բախտի հողում:  
Գուցե ես դառնամ լռության նոր շերտ:  
Գուցե ես դառնամ դուռը տիեզերքի:



**ՈԳՈՒՍ ԾԱՂԻԿՆ Է ԴԱ**

**Կանգնել եմ  
ճանապարհի և հիշողության միջև՝  
ափիս մեջ տրորելով  
հորիզոնի լույսը՝  
հասկը ցորենի:**

## ՈԳՈՒՍ ԾԱՂԻԿՆ Է ԴԱ

Ժամանակի քարերը  
պայթում են,  
բողբոջի պես  
հիշողության:  
Ոգուս սահմանագիծը հատող բառը  
ինքն իրեն այլևս չի ճանաչում:  
Ինչպե՞ս գտնել դուռը:  
Չգիտեմ, թե ի՞նչ է սերը,  
բայց գիտեմ մի բան.  
լռության ձեռքով շոյում էի միշտ քո ազդրերը,-  
այդ ձեռքն էլ հատեցիր...  
Մենակությունս - անհայտության նոր  
օազիս՝ն է:  
Ծաղիկ եմ աճեցնում  
ձակատագրիս պատուհանին:  
Ոգուս ծաղիկն է դա,  
որից նեկտար են տանում  
ճանապարհները...

\* \* \*

Այստեղ Աստծո շննչն է դիպել...  
Եվ ծնննդ է իմ արտաբերած  
ամեն մի բառը: Առաջին  
լռությունս՝ ինքնատիրապետման  
փորձ էր: Ինքս իմ միջով անցնող  
ճանապարհ եմ:  
Սահմանագիծը  
(թե այն գոյություն ունի)  
կյանքի վիհն է:  
Եվ ըմբռնել ինձ՝  
նույնն է, թե համբուրել աստղը  
թևով բարձունքի:  
Աստծո շննչն է դիպել իմ բառին:  
Եվ իմ արյան մեջ միավորվում են  
բևեռները Ոգու:



## ԵՎ ԻՆՁ ԽՈՍԵՑՆՈՒՄ Է ԼՈՒՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՌԻ

Երբ արժիվները կտցահարում են լռությունը հորիզոնի,  
ես ազատում եմ գրչիս հայացքը վարագույրներից:  
Եվ ինքնաորոնման մի նոր շրջադարձ է իմ տողը:  
Երկու բառի միջև կանգնել եմ, որպես  
հաղորդության խորան,  
և ինձ խոսեցնում է լռությունը բառի:

\* \* \*

Ես կոխկրտում եմ դեղին մղձավանջը  
քառասային տենդի:  
Շունչս քավելով ճյուղերին ծառի՝  
արցունքների պես  
կաթկթում է դեռ:  
Տերևները այս  
բզկտված հոգուս փոթորիկներն են...

\* \* \*

Կանգնել եմ  
ճանապարհի և հիշողության միջև՝  
ափիս մեջ տրորելով  
հորիզոնի լույսը՝  
հասկը ցորենի:  
Նահատակների լռության միջով  
մի բառ էր քայլում՝  
վիրավոր առավոտը:  
Մի տուն փլվել էր՝  
պատերը մխրձելով երկնքի մեջ:  
Մի ձայն չէր գտնում լույսը հանգրվանի:  
Անսլաք ժամացույց է  
ընթացքը Յավերժի:

## ԹԱԳՈՒՅԻ ՄԱՆՈՒՇԱԿԸ

Խրամատներում  
քամվում է երազներիս շունչը,  
որպես նարինջ:  
Դիմագծերիս շարժվող լույսը  
չգրված նամակ է:  
Ընթերցող է հողը:  
Յիշողության լապտերը:  
Ուր որ է՝ կնշմարվի հասցեն  
**աղետի: Տագնապի հորիզոնը:**  
Եվ հողի խորքից բխող երկինքը  
(փառքդ շատ, Աստված)  
թագուհի մանուշակն է:

ՈՐՊԵՍ ԼՈՒՍԱԿԻՐ ՅՐԵՇՏԱԿ

Իմ և քո միջև ձգվող փողոցը՝  
անհայտությունն է,  
իսկ սիրել բառը  
հուշի արխիվն է:  
Երագի լույսն է ծաղկել  
իմ աչքերում  
և մեղվի շնչով  
փաթաթվել է ծառը,  
որպես լուսակիր հրեշտակ:

\* \* \*

Երկու պայծառ աչքեր  
նւղեկցում են ինձ դեպի անհայտություն:  
Եվ արյունս, որպես թռչուն,  
կաթնմ է  
ափի մեջ Անհունի:

## ԾՆՈՒՆԴ

Եվ բառերից ոգու վարագույրն է ընկնում  
ապրումներիս կարծր երկաթգծերի վրա,  
իմ հայացքը՝ մրրկում  
լաբիրինթոսում տողի,  
և լռությունն է մղվում դեպի առաջնագիծ,  
որպես զինվոր խիզախ,  
որպես ուխտավոր սրբազնագույն Երթի:

Եվ երազը, ինչպես ճանապարհից բխող ծաղիկ,  
բուրում է ոգուս բլեռների միջև,  
և ընդլայնվող լռության առանցքը շիկացած  
տեսադաշտն է բառի՝  
Անսահմանի սյունը...

Եվ իմ առջև բացվող խոսքը,  
ընդլայնվում է, որպես խորան:  
Ես լսում եմ վերածնվող տարածության ճիչը,  
իսկ Անհայտի քարե ճակատն ի վար  
կախվում է տողը,  
որպես լապտեր,-  
և ներշնչանքիս բիբերում արթնանում է լույսը...

## ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՉՔԸ

Ծովի ալիքների ամեն մի կաթիլ  
տարածության աչքն է:  
Օրը լեռն ի վար սահող  
թաժա հաց է,  
որ մանրում եմ լուսամուտիս գոգին  
թռչունների համար.-  
միասին այս ձմեռն հաղթահարելն հեշտ է...  
Վայելքի ալիքներում խեղդված ձկներ կան...  
Ձեռքս դնում եմ քո կոնքին,  
որպես ժամացույցի սլաք.-  
գուցե ետ պտտենք  
ժամանակը հիշողության,  
վերականգնենք լույսն ու  
համը գգվանքների...  
Ծովի ալիքների ամեն մի կաթիլ  
տարածության աչքն է:



\* \* \*

Ներշնչանքի ճյուղից  
թափվող բողբոջները՝  
օրերի ճիչներ...  
Հաղորդակցության  
անդրինդ է տողս:  
Ծիծեռնակը  
զիզզա՛զն է Անհունի:  
Իսկ հորիզոնը  
մոմի թրթռուն բոց է  
խորանում ցավի:

\* \* \*

Երբ բացվող երազի մեջ իրականության դեմքն է՝  
Շուշին,  
հիշողությունս կատաղի լապտերն է  
շիրմաթմբերի...  
Եվ երազանքի սալերի վրա թփրտում են  
փետուրները Տենչի...

\* \* \*

Ես գրում եմ  
սալերի վրա  
ապաշխարության:  
Չհայտնաբերված  
մի կետ եմ ես՝  
Անսահմանի սիրտը:  
Երկնքի և երկրի միջև  
կայանն իմ վերջին  
վերածնվող բառն է...

\* \* \*

Ուսանող էի,  
և երկնքից ընկնող թավշե վարագոյր էր  
իմ հայացքը,  
իսկ դասաժամերը՝  
ապաստարաններ,  
ուր ելումուտ անող աղջիկները  
առեղծվածներ էին...  
Իսկ դասագրքերից սահող պատկերները  
փոխակերպվում էին հոսանքի մեջ սիրո,  
դառնալով այս կյանքի զորավոր մասը...

\* \* \*

Ինձնով կրկնապատկվել է  
շերտը մենության:  
Եվ հող է դարձել  
բնակարանիս դուռը:  
Ես կամ, թե չկամ:  
Ես հավելված եմ:  
Իսկ գրիչս դարձել է  
ոգին ժամանակի:

\* \* \*

Աչքերս  
փողոցի սյուներից կախված  
լապտերներ են,  
որ լուսավորում են  
հաղորդությունը ճանապարհների...

\* \* \*

Տողերիս միջով հոսում է  
արյունը բառերի,  
որպես տեսիլաժամ:  
Օրը դեմքիս այն մասն է,  
որով հավում եմ  
խաչքարերին  
և աղոթում...  
Դիմազծերիս պարսը  
տանող մեղուները...  
ձանապարհներն են...

\* \* \*

Դու իմ երագի մեջ  
լուսապայծառ աղջիկ էիր:  
Պարիսպներից կախվում էին  
հոսանքները հիշողության:  
Ես քո ուսերից ըմպում էի  
ձիչերն անապատի:  
Ստվերներում անէացող  
մի քաղաք եմ ես  
և մնայուն դեմքը  
անհայտության:



\* \* \*

Ես նայում եմ սիրո աչքերին՝  
կայծքարին ցավի:  
Եվ քամիների թարթիչներից սահում եմ  
քո ուսերին,  
որպես ծաղկաթերթ...  
Եվ քո շուրթերը,  
որոնք պիտի շնջային իմ անունը  
այս առավոտ,  
գրեթե ձուլվել են...  
ծաղկած ծառերին:

## ԴՈՆԵՐ

Ամպերը՝ տխրության և տառապանքի  
խորհրդանիշեր:  
Ես իմ ծնունդի նախանշանն եմ:  
Անդեմ ժամանակ է  
ճամփամիջի քարը,  
թե ներշնչող մի երանգ՝  
կտավին անցյալի:  
Տողերը դռներ են,  
Անհայտի դեմքը...  
Եվ անցյալն համբուրում է ինձ ապագայից...

\* \* \*

Շուրթերս կարծես կիսանտ են  
թողել ընթերցումը  
քո հմայիչ մարմնի:  
Քո շնչի ծալքում բացահայտվում է  
լռությունը բառի:  
Օդի ճյուղերից  
ըմպում եմ նորից  
լույսը հայացքիդ...  
Եվ ձեռքերիս բողբոջներում արարվում է  
ներդաշնակությունը գարնան...

\* \* \*

Ներշնչանքից թափվող փետուրները  
շոյում են ավերակները հոգուս,  
որի մի անկյունում բուսած մանուշակ է  
քո համբույրը:  
Եվ ուրվական- քաղաք է  
իմ ստվերը:  
Իմ և Աստծո միջև բուսած երկինք է  
այս օրը,  
որի բուրումնավետ թերթերը  
ձեղքում են  
մթին հորիզոնը ձակատագրի:

### ԳԱԼԻՔԻ ԿՏԱԿԸ

Առավոտը դեմքիս լուսացող մանն է...  
Տարրալուծվում եմ  
ակոսներում խոսքի:  
Օ՛, հիշատակի սյուներից կախված  
մի լապտեր է դեմքս,  
Անդրժամանակի անտերունչ տարածքը՝  
կտանվն է Գալիքի:

\* \* \*

Չորիզոնի մատները շոշափում են մայթերը,  
ես վերադառնում եմ տուն մառախուղի միջով.  
մորս հայացքը ճամփաս լուսավորող մի կանթեղ է,  
իսկ ես ճակատագրի էջում բաբախող մի տոն էմ:



ՅԵՆՏԵՆԻՆԻ ԵՎ ԵՍ

**Իմ տենչերի ծոճքում  
սարսռում է ստվերն հրեշտակի  
և ձուլվում քարին, հողին ու մարդուն՝  
սիրո բան լսելու անհագ բաղձանքով:**



## ԴԵՄՔՍ

Դեմքս

ձակատագրի բացվող փեղկն է,

որով ներս է խուժում թարմ օդը ժամանակի:

Ժամանակի շուրթից առնուն՝ եմ իմ բաժին համբույրը:

Մի բառ.

և բացվում է խորանն իմ տառապանքի:

Զգացմունքը լույս է:

Շուրթերիս մեջ պայթում է բողբոջը համբույրի.

շնչիր բույրը Անսահմանի:

Անունդ ծաղկում է իբրև ճյուղ հոնի:

Հոգին տարածության:

Դեմքս

ձակատագրի բացվող փեղկն է...

## ՋՐԵՇՏԱԿԸ ԵՎ ԵՍ

Իմ հուշերի ճոճքում  
արթնանում է ստվերն հրեշտակի  
և ջրի արծաթ կաթիլներ ցողում՝  
Անսահմանի ծարավն հագեցնելու հույսով:

Իմ հույսերի ճոճքում  
օրորվում է ստվերն հրեշտակի  
և պատվաստվում ճյուղին խնձորենու՝  
պտղավորվելու ակնկալիքով:

Իմ տենչերի ճոճքում  
սարսռում է ստվերն հրեշտակի  
և ձուլվում քարին, հողին ու մարդուն՝  
սիրո բան լսելու անհագ բաղձանքով:

## ԻՆՔՆԱՆԿԱՐ

Ահա մի հայացք՝  
պահածո մի տուփ,  
որ գլորվում է ճանապարհին ի վար:  
Ահա մի ստվեր  
և մի ուրվական,  
որ անցնում է պատերի միջով ժամանակի  
ու վերադառնում,  
որպես չգրված  
և անհայտ մի տող...  
Ահա շուրթերից ձակատագրի լույսն ըմպող  
մի պոետ...  
Ահա ինքն իրեն գերազանցող մի բառ՝  
չկայացած մի հանդիպավայր:  
Ահա լվացված ապակու վրա  
հևող արցունքը իմ մենակության:  
Ահա հուշերիս սևահողի մեջ  
ծաղկող բիրբերը հեռավորության...  
Ես՝ հույսի, գույնի և ոգու դպիր...  
Ահա ներշնչանքիս հողում խլրտացող տողը՝  
սերմն Անսահմանի...

ԲԱՌԵՐԻ ԿՅԱՆՔԸ  
ՅԱՄԲՈՒՅՐԻ ԺԱՄԻՆ

Եվ համբուրվելիս  
(մենք դա չենք տեսնում)  
մի բառ շնչահեղձ է լինում:  
Մի այլ բառ նույնիսկ  
վերածնվում է ենթատեքստերում:  
Որոշ բառեր էլ  
(մենք դա չենք տեսնում)  
բնավորվում են  
ջերմ լուսանցքներում ժամանակների:  
Ժամանակի շունչը  
որոնման կենտ է:  
Համբույրների միջև ծաղկող աչքեր են  
հոգու բառերը:  
Մենք բացակա ենք:  
Մենք դա չենք տեսնում:  
Եվ գերակա է  
լռության կյանքը համբույրի ժամին:

ԻՆՔՍ ԻՄ ԴԱՇՏՆ ԵՄ,  
ԻՄ ՈԳՈՒ ԳԻՐԸ

Ի՞նչ են երազները՝ ժամանակից դուրս  
բացվող աչքերը իրականության.-  
կանգնել եմ երկու բևեռների միջև,  
որպես գրական իրականություն:

Եվ ճակատագրի հայացքի վրա  
գրում եմ մի տող՝  
միացնելով երկու ափերը իրականության:  
Երազից այն կողմ՝  
շռայլ բուրումն են  
մանուշակները առեղծվածների:  
Ինքս իմ դաշտն եմ,  
իմ ոգու գիրը:

## ՃԵՐՄԱԿ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երազների ձերմակ ծվեննե՛րն են մաղվում  
իմ ձայնի խորունկ ձորերում:  
Արահետի ոգին մի գնդակ է,  
որ պտտվու՛մ է  
լազուր հայացքում իմ մանկության:  
Եվ մի երեխա՛ է վազում շարունակ  
թիթեռի հետևից ձերմակ հիշողության:

\* \* \*

Սպասումներիս ձերմակ թիթեռներն են հևում  
ոգուս դաշտը զուգող ծաղիկների վրա,  
իմ ստվերն էլ կյանքի բուրող արահետ է,  
որով վերադառնում է ինքնությունը հույսի,-  
և իմ մեջ բաբախում է տարածության հոգին:

\* \* \*

Մաշկիս ծակոտիները լուսամուտներ են,  
որ բացվում են դեպի լույսը գգվանքներիդ:  
Ծունկիդ սարսուռներում լուսանում է օրը:  
Եվ ունայնության անցքերը լցվում են  
արցունքներով խոտի:



### ՏՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՅԸ

Տառապանքիս աչքերի մեջ լցվող  
հավատ է իմ բառը:  
Եվ ճանապարհը տողի  
դողանջն է զանգի,  
որ պիտի դառնա  
հավատամքի դուռ  
և... ուխտատեղի:

\* \* \*

Չիշատակի ճյուղից կախվել է  
պարսը դիմագծերիս,  
և դողանջում են  
ձանապարհները...  
Չույսերիս ավերը  
համբուրվող շուրթեր են:  
Դեմքս`  
արահետի շնչառությունից հառնող  
տարածության անուն  
և ակոսներում պայթող լուսաբաց:

## ԱՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ՄԻ ՊԱՏՈՒՀԱՆ Է

Ընկնում են անվերջ վարագույրները...  
Բացվում է դեմքը իմ ճանապարհի:  
Եվ լռությունը բառ չէ ամենևին,  
այլ ելք է հոգու լաբիրինթոսից:

Անհայտությունն էլ մի պատուհան է,  
որ ես բացում եմ դեպի խորքն հոգու.  
և տարածության բացվող փեղկեր են  
երգերս տամուկ, ձայնս՝ հրեղեն.-  
մտքերս հոգու վառվող մոմեր են,-  
ոչ-ոք չի կարող ընթացքս շեղել...

Ես՝ ոգի, անուն և շնչառություն,  
ես՝ մարմնավորվող դեմքը Անհունի,  
իսկ իմ հայացքը ամբողջանում է  
ալիքով ծովի, քայլով մրջյունի:

## ՅՈՒՑԵՎԻՃԱԿՆԵՐ

Նայիր ծովի ալիքներին  
և պոկիր կաթիլները վայելքի.-  
և կամբողջանա՛մ քո ինքնությունը:  
Թեև ընդլայնել ես լռությունը քո  
ուրվականների թագավորությամբ,  
միևնո՛յն է՝ դու խրված ես հողում  
քո երգով, վարքով և քո հայտնությամբ:  
Չէ՛-որ ճանապարհից բխած երազն է  
հասունանում քո աչքերում,  
դրպես միրգ:  
Եվ բառերը քեզ համար  
փեղկեր չեն՝ որ բացես,  
այլ՝ վերածնվող հոգեվիճակներ...

ՄԵՐ ՇՈՒՐԹԵՐԻ ՄԻՋԵՎ  
ԾԱՂԻԿՆ Է ԿՅԱՆՔԻ

Քեզ հանդիպելու հույսն եմ օրորում,  
որպես տարածության բարուր,  
և ձեռքերիս միջից սահում է ժամանակը՝  
թփրտացող մի ձուկ:

Մեր շուրթերի միջև ոչ թե օդն է խոսուն  
կամ փետուրը ամպի գրում է մի երկտող,  
այլ բացվում է երկինքն ու բախտի՛ պես հոսում,  
առեղծվածն է պայթում,  
որպես կյանքի բողբոջ:

Մի բառ գրիր շուրթիս սարսուռներում ձերմակ,  
թարթիչներով գրիր իմ բիբերի վրա,  
թող մշուշը լինի հարմարավետ վերմակ,  
պարանոցիդ շուրջը  
համբույրներս դառնան  
բաբախող եղանակ...

Մեր շուրթերին բացվում է ծաղիկը կյանքի,  
որ կոչվում է համբույր կամ լույս երագի,  
անունդ դնուն է հավատի,  
փնտրտո՞ւք ելքի,  
քայլվածքդ արտացոլանքն է իմ չգրված երգի:

## ԲԱՑԱԿԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Եվ կյանքն էլ բառ է, մի մենակություն  
ու չքացահայտված շերտը տիեզերքի.-  
ո՞վ է հայացքով հատում այս պահին  
սահմանը Ոգու,  
ո՞վ է քանդակում բացակայությունն իր  
հայացքում քարի,  
ո՞վ է հանգերգում:

Ուր Աստծո շունչն է, այնտեղ բացվում է  
մի նոր ասպարեզ՝  
կենտրոնը Ոգու:  
Մեկն իր երգերով հատում է սահմանն  
անորոշության,  
մյուսը՝ գտնում  
խորհրդողը լույսի:

Անհայտությունն էլ լռության բառն է,  
որ կայանում է իր վերածնվող  
հոգեվիճակով,  
առնչությունը զորակցող ձեռք է,  
ձակատագրի նշան տարածության մեջ,  
իսկ ժամանակը ճանապարհի գիրն է:

Եվ կյանքն էլ բառ է, մի մենակություն  
ու չբացահայտված շերտը տիեզերքի.-  
ո՞վ է հայացքով հատում այս պահին  
սահմանը Ոգու,  
ո՞վ է քանդակում բացակայությունն իր  
հայացքում քարի,  
ո՞վ է հանգերգում:

## ՇՈՒՇԻ

Շուշին քաղաք չէ՛, տարերք է քարե,  
բացվող պատուհան է դեպի անհայտություն,  
արդ իր հույսերի ձեռքն է կարկառել՝  
բռնելն Ոգու աստղեր մշտարթուն:

Շուշին աշխարհին ասում է՝ բարև,  
մանկան ճիչեր են ծլում խավարում,  
քարե երազ է ու լույս է քարե,  
երկնքի անջքն է մեր այս հարավում:

Շուշին քաղաք չէ՛, տարերք է քարե,  
բացվող պատուհան է դեպի անհայտություն,  
մեր հոգում բացված էլք է ու արև,  
երկնքի և երկրի ներդաշնակություն:



## ԳԱՐՈՒՆ

Ա՛խ, գարունն այս ի՞նչ է ուզում.  
բողբոջի լույս, կյանք ու հուզում,  
իսկ ձեր շենքի վերին հարկում՝  
հաճույքների եռք ու հակում...

Գարնանաշունչ ճյուղ է օրը,  
որ բուրում է ուսին լեռան,  
իսկ ձեր շենքի քիվի վրա  
թռչունների երգ-օրո՞ր է...

Լույս է կաթում ճյուղից ծառի,  
հողը թարգմանն է այս ծիլի,  
իսկ ձեր շենքի վերին հարկում՝  
հմայքների ելք ու հակում...

## ԲԱՌԵՐ

Բառարանի սահման և ներդաշնակ քառու,  
մեկուսացված բառեր՝ բրածո կերպարանքով,  
ժամանակն անցնում է լռության առանցքով,  
իսկ աշխարհի դեմքը՝ բացահայտվող մի խոսք:

Ժամանակը, որպես հոգու հաղորդալար,  
ագուցում է իրար ապրումների եզրեր,  
և բացում է խորքից կարոտների եզերք,  
սկզբնավորում մի կյանք, գունախաղով մի պար:

Գեղանկար աշուն, նրբատեսիլ կտավ,  
անշրջանակ երազ ու տվայտանք հոգու,-  
նվ հղացման հուրը իմ բառերին կտա,  
նմ հայացքը ընկավ, որպես մի վարագույր...

Բառեր, բառեր, բառեր, հիշողության բառեր,  
անհաղորդ ու անմերձ, դատարկ սրճարաններ.-  
նվ է փողոցների լապտերները վառել,  
նվ է մաքրել փոշին, բացել պատուհաններ...  
Բառեր, բառեր, բառեր, խրախճանքի բարե ՚ր...  
Մի աշխարհ մեռնում է, ծնվում է այլ աշխարհ...

Բառարանի սահման և ներդաշնակ քառու,  
մեկուսացված բառեր՝ բրածո կերպարանքով,  
ժամանակն անցնում է լռության առանցքով,  
իսկ աշխարհի դեմքը՝ բացահայտվող մի խոսք:

ԱՍՏԾՈ ԿՇԵՌՔԸ

Գրչիս հայացքը  
ընկնող վարագոյր է,  
իսկ ազատությունը՝  
տարածությունն բառի:

Երազն ու կյանքը  
երկու նժարներն են  
Աստծո կշեռքի:

Ծաղիկների ցողով  
գրված տողերն են  
ճանապարհները՝  
Ոգու ծիրից թռած  
ասուպների շղթա:

## ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ

Ես տեսնում եմ  
ստվերիդ սարսուռն արևաբույր,  
գարնան ծառերի խմբանկարը՝  
ջրերում առվի:  
Դու կանգնել ես առվի և հիշողության միջև,  
որպես անցյալի վկայության ծվեն,  
որպես ներկայի  
դեմք,  
երազ ու ձայն...  
Եվ մեզ համակած հուշը  
շրջապտոճյտն է Անդիի:  
Իսկ երրորդը, որ մեզ  
դիտում է կողքից՝  
(ինարավոր է) սերն է...

\* \* \*

Գուցե տողերս  
արցունքներ են,  
որ գլորվում են  
ձակատագրի այտերն ի վար...  
Եվ ես ընթռնում եմ  
վերջապես,  
որ գարունը սկսվում է  
քո թարթիչներից...

## ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ

Գեղանկարը  
սահում է շրջանակից,  
ինչպես քո զգեստը՝  
իրանից բուրող,  
երբ դու պատրաստվում ես  
մտնել անկողին:  
Շրջանակում մնում է  
անարվեստ մի պեյզաժ,  
իսկ զգեստիդ մեջ հիմա  
արթնացողը՝ կյանքն է,  
թե քեզնից զրկված  
էությունը քո՝  
փոթորկվող եսը  
այս տարածության...

## ԵՍ ԳՐՈՒՄ ԵՄ

Ես գրում եմ  
համբերության մեջ սպիտակ թղթի,  
որպեսզի նա զատվի անորոշության  
ամպաթաղանթից:  
Իմ գրչի ծայրին արևի շունչն է,  
որ փոխանցվում է թուփս ակոսներին  
Ներշնչանք - Ոգու:  
Գրում եմ նաև լուսանցքում կյանքի  
և ժամանակի բիբերում դառնում  
զարկերակվող լույս  
և տեսողություն:

## ՏՈՂԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տողը լռության և տարածության  
արևաշունչ սերմն է,  
որ խլրտում է ներշնչանքի հողում:  
Տողը հայացքն է իմ ճանապարհի,  
որ փոխանցվում է ուղևորներին,  
որպես տաք ժպիտ  
և լոյս հավատի...  
Տողը երազի և իրականության  
միջև կամուրջ է,  
հաղորդությունն է աներևույթ Գոյի,  
դուռը Անդիի:  
Տողն՝ Անսահմանի շնչառության մեջ  
նշմարվող հասցե...  
ուղեծիր Ոգու...



## ՄԻ ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Մագաղաթի թերթեր են  
իմ քայլերը,  
դրոնք աննկատ հավաքում է  
ժամանակը,  
կազմում՝

**գիրքը կյանքիս:**

Ինքնահանդիպման ժամն է առջևում:  
Դա կլինի բոլորովին մի նոր ընթերցում:  
Իմ գրչի ծայրին՝  
ազատությունն իմ մեծ...

## ՏԱՌԱՊԱՆՔԻՍ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ

Երբ գալիս ես դու,  
այրված-մոխրացած եմ լինում  
հայացքիս դաշտերը,  
և մզլահոտ է ելնում  
անկյուններից հոգուս...  
Քո համբույրները միշտ հանում եմ ինձ  
փակուղիներից ճակատագրի:  
Եվ գծերը, որոնց միջև  
գրում եմ ես հիմա,  
ուղեցույցներ չեն,  
ո՛չ էլ ճամփաբաժան  
սյուներ,- գծերն այս  
տառապանքիս անդրադարձներն են...

## ՃԱՄՓՈՐԴԻՍ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Քայլերիս միջև անդունդն է հուշի,  
քայլերիս միջև՝ տառապանքի վիհ,  
քայլերիս միջև՝ սահանք հավատի,  
քայլերիս միջև՝ ղողանջներ հույսի:

\* \* \*

Քայլի՛ր, քայլի՛ր մինչև եզրագիծը հույսի,  
դեմքդ սուզի՛ր վարդի երազներում կարմիր.-  
քեզ ընդառաջ կգա՛ կառապանը հուշի,  
քեզ կգրկի՛ մի օր երջանկության քամին:

## ՄԱՐԴԸ

Այս դեմքը դժու է.  
բաց արա և մտիր  
բնակարանը հոգուս:  
Այս ձեռքը լույս է  
և պտղատու ծառ.  
սեղմիր ջերմությամբ:  
Այս քայլը հուն է,  
հավատի խորան...  
Իսկ անունը քո`  
մատենադարան:

## ԾԱՌԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծառի հարությունը թուղթ չէ՛ ամենևին,  
այլ՝ բանաստեղծություն.-  
այդպես է սկսվել Հարության ժամանակը,  
գոյության նոր հինը...  
Ծառի ժամանակը Հարության թռչուն է...

## ՀԱՎԱՏԻ ՇԵՄ

1

Օ՛, իմ լռության հատակը գուցե ահազանգն է նույն...  
 Այն շուրթը, որը տաճար է դառնում Մեսրոպյան բառով,  
 այն աչքերը, որ Չայկյան նետերի ցուլքերը ունեն,  
 այն ոտքերը, որ վստահությունն են կնքում դարերի,  
 այն լեզուն, որով հասնո՛ւ եմ դառնում  
 ձեռագրերին առեղծվածների,-  
 միթե ինքնական և կամ ականա  
 պիտի կուլ գնան  
 կյանքը դժոխող դեղին քառսին,  
 թմրությանը սև...

Նհիարել եմ ես իմ հույսերի պես,  
 ցավի դժոխքն է ներսս պարուրել,  
 իմ ոգուց հառնողն՝ էլի երանգն է,  
 բայց ես մենակ եմ Աստծո նման:

Օ՛, իմ լռության հատակը դարձյալ ահազանգն է նույն...

2

Հայրենիք,

քո հիշողության երակից կաթկթող արշալույսները  
գուրգուրում են հավատիս սաղմերը,  
ամեն վայրկյանիդ առէջների մեջ  
հազար էպոս է  
ծնվում ու մեռնում...

Դիմագծերդ բացվում են,  
ինչպես դռները արևածագի...  
Հուշդ ադամանդ է...  
Վիրավոր ոտնահետքերդ՝  
շեղբեր կայծակի...

Հայրենիք,

լռությանս ակունքները շոյող մայրական ձեռք,  
տողերիս մեջ բացվող Անսահմանի դուռ...  
Դու՝ Ոգու անոն  
և տարածություն...

Աստծո շուրթերին շնչավորվող երազ և հավատի շեմ:

3

Քո հույսերի բոցի վրա  
իջավ, որպես ծանր պատանք,  
մի պղնձե արհամարհանք:

Ստինքն օրվա հատվեց սրով...  
Լցվեց ամեն բակ ու փողոց  
անդունդների հեկեկոցով...

Կանգնեց աշխարհն ոտի վրա՝  
տեսնելու, թե հնադարյան  
մի ազգ ո՞նց է տանջվում արյան  
կարոտներից տենդագալանի...


Քո վերքից էլ վառեց ծրանգ...  
Ո՞վ է այս սև դժոխքն հյուսել,  
ծաղրել ցավը դարում դժխեմ...  
Մո՞թն է նստել մութի վրա...

Ծավալվեցին բազմադարյան  
քո հույսերի բոցի վրա  
թախիծ, հեզնանք ու մահվան պանիր,-  
իսկ վերքից դուրս՝ խղճի գիշեր...



\* \* \*

Դու հատել ես հիմա  
ոգին այս թղթի  
մի այնպիսի տողով,  
որ երկինք է կարծես,  
որ եզե ՚րք է կարծես,  
որ երանգ է կարծես  
և սպեղանի...



Նկարը՝  
Ալվարո Գրիգորյանի

## ԵԼԱԿԵՏ

Գուցե արդեն եկել է այն ժամը լուսե,  
երբ իմ ձայնը պիտի ուռչի անհուններով,  
ինչպես հասկը՝ հատիկներով հանապազօր,  
լինի նաև այնքան խոր ու պատկերավոր,  
ինչքան կույրի երազային տեսիլները,  
որ ավելի հողեղեն են,  
քան թե... հողը...  
համրության մեջ այնպես խոսուն  
ու ոգեղեն,  
ինչպես նիրհող իմ մանկան հագուստները...  
Գուցե արդեն եկել է այդ ժամը,  
կամ էլ... անցել-  
շրջանցելով ինձ պես քանի՜ տառապյալի  
համր ու լուսե,  
պարզ ու չնչին,  
խավարաբեկ  
ու եսամերժ ապրումները,-  
ես չգիտե՛մ...  
Գիտե՛մ միայն,  
որ այս դարի  
քանի՜-քանի՜ տառապյալի նման ես էլ...  
մարդկային ճակատագիր պիտի հերկեմ...

\* \* \*

Յողմն է փչում,  
և ծառերից փոշիներն են ընկնում,  
ինչպես թամբերը՝ սլացող ձիերից.-  
սմբակների զարկից բացվում են անընդհատ  
դրախտային հետքեր...

## ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ

Ձայնդ հենվում է դարին  
և, անտարակոյս,  
մերթ երերում է, Չարենց,  
դողդղվ հուշախոյս,  
մերթ կծկվում է, մերթ՝ բացվում  
շողի ջերմությամբ,  
մերթ ընկնում է հանց արցունք,  
խաչված լռությամբ:

Ա՛խ, ստվերի քարերին  
քո տողն է լալիս,  
առնում երանգ արևից,  
երանգ է տալիս:

Երբ մրսում ես՝ շապիկի  
նման կարտոը հագնում,  
փարվում ես քո Արփիկին,  
փայում ուսերն անհագորդ:

Դու ծարավը հետքերիս  
մարի՜ր քո քայլով,-  
բախտդ գրանգ էր վերին,  
տանուլ տվեց ղվ...

## ԻՄ ՀԵՏՔԵՐԸ

Մեկը կարծես տեսիլք է ծլած,  
մյուսն՝ առասպել,  
մեկը՝ դառնության աղիքով անցած  
միջակետ հույսի,  
մյուսը՝ հողի մտքից ալիքվող  
ծիածանի՜ թև,  
մեկը՝ վիրակապ ու շաղկապ նաև,  
մյուսն՝ հսկող աչք,  
մեկը՝ շերտ կարմիր,  
մյուսը՝ մրմուռ,  
մեկը՝ մենություն,  
մյուսն՝ հույսի դուռ...  
Եվ ունեմ նաև նորածին հետքեր,  
դրոնց պորտը դեռ  
նոր է կտրվել...

ՈՐՈՒՄՆԵՐՆԵՐԻ ՎՐՈՒՅՐԻՆ

Երբ կանչում ես՝ հայր,  
ես ունենում եմ հայրենիք ու ձայն,  
իսկ հայրենիքը ունենում է ինձ:

\* \* \*

Բառի հրեղեն հայացքի դիմաց  
ծնկաչոք է քո երկինքը, իմ բախտ:  
Խաչից սահում է դեմքը տառապյալի,  
և ես ապրում եմ կյանքի հարությունը:

\* \* \*

Քո շուրթերի մեջ այնքան կարոտ կա,  
այնքան հավատ կա ու երանություն,  
սենյակում, որտեղ երազն է ներկա,  
մեր համբույրների շունչն է թևածում:  
Քո գիրկը կարծես շարունակվում է  
ծառերի մեղմիկ սոսափյուններով.-  
ամեն չասված բառ՝ աստղի անկում է,  
ամեն տենչ՝ կյանք է տալիս համբույրով:

## ԲԱՂՁԱՆՔ

Աստված իմ, թող ապրեմ հույսով,  
շարունակվեմ լույսով տողի...  
Թող ես ինձնից ցավերիս չափ վեր բարձրանամ,  
որ բարակի իմ կեղևը քաղցրությունից:  
Չասունանամ, ինչպես  
իմաստն աչքերի մեջ,  
և կախվեմ տաք հորիզոնից  
բյուրեղավանդ իմ արցունքով:  
Թող ոչ-ոքի չնախանձեմ,  
չնախանձեմ և...հագուստիս,  
որ ապրում է անանձնական կյանքով միայն,  
որ ապրում է անանձնական կյանքով միայն:



## ՈԳՈՒ ՅՈՂՄ

Մենությունս, որպես սպի,  
Ապրում հեռու անձավներում,  
Ի՛նձ է հիշում եզրին արտի,  
Տանջում գերիչ երազներով:

Քրքրում է, որպես սպի,  
Ցավի բոլոր հոլովներով,  
Ո՛չ գգվանքի, ո՛չ էլ սրտի  
Յուր չի անցել իմ ափերով:

Իսկ երբ դու ես գգվում այնպես,  
Որ հալվում է համր հեռուն,  
Վերածնվում և ցնծում եմ  
Քո համբույրի սարսուռներում:

Երբ վանում ես, չարչարում ինձ,  
Խանդի բոլոր հոլովներով,  
Արթնանում է, որպես ալիք,  
Ցավս իր մութ անձավներով:

Ո՞վ է հանգցնում իմ մենության  
Վերջին մոմը հոգուս բարձրից.-  
Օ՛, քամին է խուժել դարձյալ  
Ծոցիդ դաժան անձավներից:

Քրքրում է, որպես սպի,  
Ցավի բոլոր հոլովներով,-  
Բավ է գգվանքն այս մեծ ստի...  
Չոհմն է անցել իմ ավերով...

## ԱԿԱՄԱ ՌԻՂԵԿՑՈՂԸ

Մահը իմ մասին ավելի շատ բան  
գիտի, քան կյանքը,-  
վկա՝ ավերված երկիրս...  
Աշխարհն իմ մասին լռում է համառ,  
ինչպես վիրակապն՝  
ապագա՛ վերքի ու ցավի մասին,-  
վկա՝ իմ սիրտը-  
զսպանակն ահի:  
Իսկ ես ապրում եմ՝ մահից կորզելով  
Իմ շունչը, դեմքը, ճակատագիրը...  
Այսպես ձգտում եմ իմ միջից հանել  
կորիճը մահվան...  
Իսկ թե չստացվի...  
Թող քայլի ինձ հետ,  
ինչպես... ստվերս...

## ՈՒՂԵԿՑՈՂ ՏԵՍԱՐԱՆ

Ցեխի մեջ ընկած շիշը կարծես թե  
չորացնում է իր դատարկությունը՝  
կախված շրթունքով  
հեգնելով շտապ անցնող-դարձողին.  
և ինչ-որ մեկի մատների հետքն է  
սկսում պաղել  
հին ցախավելի բռնակի վրա...  
Լռությունը մի առանձնարան է...  
Իսկ մանկությունս թռչունի նման  
իր թևերից նոր սերմե՜ր է նետում  
ծագող արևի ակոսների մեջ...

## ԶՐՈՒՅՑ

*Որդու՝ Վահագնին*

Անունիդ և քո միջև կա տարածություն:  
 Դու անունիդ չափ չե՛ս հասունացել:  
 Դու այն կրում ես վերնաշապկի՛ պես,  
 երբ իջնում ես բակ՝ խաղալու  
 կամ երբ դպրոցում  
 դա՛ն են հարցնում...  
 Անունիդ և քո միջև կա հիշողություն:  
 Եվ առավոտյան (անուշ երազից)  
 արթնանում ես դո՛ւ,  
 հետո՝ անո՛ւնդ...  
 Եվ այդպես ամեն մի քայլափոխի  
 զգաստանում ես՝  
 ընդունելով կամ  
 վանելով քեզնից  
 նորո՛ւյթը կյանքի...  
 Անունիդ և քո միջև կա անհաշտություն,  
 կա արյան կա՛նչ ու...  
 հավատարմություն:  
 Եվ այժմ արդեն չե՛մ տարակուսում,  
 գիտեմ ես հաստա՛տ.  
 վտանգի պահին  
 դու առաջինը  
 փրկելու ես քե՛զ, թե քո անո՛ւնը...  
 Անունիդ և քո միջև կա հաղորդություն...

\* \* \*

Երբ անգամ միջնորմ  
չկա կյանքի ու մահի արանքում,  
մահդ քեզ համար  
(Երբ էլ որ լինի) հատակ է, սակայն  
նա մեկ ուրիշի  
համար դառնում է առաստաղված կյանք,-  
և անգամ միջնորմ  
չկա կյանքի ու մահի արանքում:

\* \* \*

Քեզ հանդիպելիս՝ վերածնվում եմ,  
նոր շննչ եմ առնում՝ քեզ համբուրելիս.-  
այդպես ածխացած բառն է շուրթերիս  
հարություն առնում  
և թևավորում լռության ոգին:

### ՔՈ ՅԱՄԲՈՒՅՐԸ

Շուրթերիս դեղին ավազուտներում  
խրվել մնացել են համբույր-նավերը:  
Ինքնաստարման ցավից համրացած՝  
տարուբերվում են... հոգուս գավերը:

Քո համբույրը դուրս քաշեց նավերը՝  
բեռնված հույզերի ալեբախտությամբ,  
հետո քրքրեց հոգիս կայծքարե  
ներսուզումների երկինքներով թաց:

Եվ սպասումների պատարագներով  
լցրե՛ց իմ կյանքի միջանցքները խուլ,  
շարժվեց իմ շնչի կարմիր կարերով  
ինքնագտնումի նոր ալեբախում...

Բայց ինքը մնաց հավիտյան թաղված  
ավազուտներում իմ հիշողության,  
որպես զարկերակ, որպես հույս վաղվա  
և երկմտանքի ամենօրյա ցավ...

Շուրթերիս դեղին ավազուտներում  
խրվել մնացել են համբույր-նավերը:  
Ինքնաստարման ցավից համրացած՝  
տարուբերվում են... հոգուս գավերը:



## ԱՅՍ ԱՆԳԱՄ ԿԲԱՑՎԻ ԱՐԵՎԱԾԱԳԸ

Միապետության սահմանը կծկվում է

ոգնի պես փշոտ:

Լույսի արգանդում՝

փոթորկվող արյուն:

Եվ հիշատակի լույսն է բաբախում լուսանցքում կյանքի:

Ճանապարհն է բուսնում,

ինչպես հայացքը

հայոց խաչքարի:

Տեսողության դաշտ:

Հիշողության ոլորտ:

Եվ հիշատակի շնչառության մեջ

բարձրանում է իմ դեմքը անընդմեջ:

Այս անգամ կբացվի արևածագը

ընդերքից Ոգու:

\* \* \*

Ես էլ յուրօրինակ բնավորություն ունեմ:  
Իսկ կարոտներս հասունացել են միշտ  
անդունդի եզրին:  
Այնպես եմ տեղավորվել ես իմ տարերքում,  
ինչպես մանուկը՝  
արգանդում իր մոր:  
Ես հիշողության ազատամարտիկ եմ,  
ոգու քանդակագործ:  
Մի անգամ անցնեմ առեղծվածի ուղին:

\* \* \*

Դու հեռացել ես:

Եվ ինձ փարվում է ոչ թե ստվերդ  
(ստվերիդ շունչը հեռու է նույնքան),

ինձ փարվում է քո

բացակայությունը:

Դու հեռացել ես:

Եվ քո անունն է հղկվում շուրթերիս,  
դրպես սրբապատկեր:

\* \* \*

Ես քայլում եմ, մայթն է բացվում և դեմից  
Լռությունն է քո աչքերով նայում ինձ:

Եվ այրվում եմ մի անանուն կարոտից.  
Լռությունն է քո վարսերով... գգվում ինձ:

Դու ներկա ես, դու անցյալ ես, դու և՛ ի՞նչ.  
Լռությունն է քո մատներով շոյում ինձ...

Իսկ այս մեկը... Աստված իմ, չեմ սպասել իսկ.  
Լռությունն է քո շուրթերով... հպվում ինձ:

\* \* \*

Այդ երբվանից է ստվերս դարձել  
աղոթատեղի.-  
ստվերս՝ լույսի ուխտադրուժ ծառան,  
ծաղրածոն նրա ճոխ ապարանքի:

Ջարդված խաչքարի աղերսն եմ լսում  
և հիշողության ճիճը մոխրացող:  
Ցավի ակոսից բուռ-բուռ հավաքում եմ  
դիմացկունության  
դասերը բոլոր  
և սփռում հույսի դաշտերի վրա:

Ինչքան էլ խառն են ժամանակները,  
հենվում եմ դարի հիշողության վրա,  
հենվում եմ ոգու ձիգ պարիսպներին:

## ՍԻՐԱՅԱՐԻ ՕՐԱԳՐԻՑ

\* \* \*

Առաջին համբույր,  
իմ սկիզբն ու վերջը թողել եմ քո մեջ՝  
իբրև մոռացված մի սրբատեղի:  
Ամեն անգամ նրանց այցի՛ եմ գալիս  
ուրվականի պես:

\* \* \*

Քո քայլերի հուրն անջատվել ճանապարհից  
և սուզվել է ալիքներում անցնող օրվա...  
Գուցե քեզ էլ չեմ սպասելու:  
Բայց քիչ հետո...  
Ես զգացի, որ կանգնած եմ,  
և շուրթերիս կայծկլտում է  
քո անունի սկզբնատառը...

\* \* \*

Իմ կեղևի տակ իրար մոտեցող երկինքներ կան:  
Պատրանքի իլիկն է պտտվում՝ չքսվելով հուշերիս:  
Ե՞րբ եմ վերջին անգամ հանդիպել քեզ:  
Ուտքերս ձյան մեջ են, և բոլոր մենությունների  
խոնավությունն է բարձրանում մարմինս ի վեր:

\* \* \*

Զբոսայգուց դուրս գամ: Քիչ էլ ճամփա գնամ  
իմ ստվերի միջով: Թող վերևում մնան  
բոլոր աղմուկները, բախումները բոլոր,  
որոնցից խարտվում է գեղեցկության ոգին,-  
ստվերիս կացարանին Անհունն ավելի մոտ է:

\* \* \*

Զգեստդ ծովի ավազի նման  
հետքերն է կրում  
փոթորիկների,  
որոնք զսպել ես  
հիշողության և տարիների միջև:  
Եվ լռությունդ խրված է իմ արյան  
արագության մեջ,  
ինչպես քո ձեռքը՝  
գիշերում մազերիս,  
որն հետզհետե  
ձեղքվում է ցերեկով  
տառապանքների...

\* \* \*

Իմ գրչի ծայրին խեղդվեց մի երկինք...  
Ես նրան տարա թաղելու  
բառերի պատգարակի վրա...  
Օրը մի քիչ էլ  
մթնեց...



\* \* \*

Յուշը կռացավ  
իմ դեղնակարմիր շշուկի վրա,  
հուշը՝ տիրոջ պես:  
Թեև համբույրներս լապտերի նման  
կախվում են ծառի ճյուղերից,  
թեև  
լցված եմ աստղերով հույսի-  
կիսով չափ հուշի՞նն եմ արդեն,  
կիսով չափ՝ կյանքի՞նը:

\* \* \*

Անունդ կարծես մեկուսարան է...  
Ես անջատում եմ  
իմ ապրումները հիշողությունից:  
Բառի սենյակից մտնում եմ կրկին  
պատկերասրահն իմ Ապագայի:  
Եվ քեզ չեմ գտնում...  
Եվ մի անծանոթ երկինք է ժպտում  
խորքերից ցավի: Ինձ ողջունում է  
հիշողությունը ճանապարհների:  
Եվ քարհատի պես ճեղքում եմ սեպով  
լռությունը այս,  
որից աստղեր են հառնում անընդհատ...

\* \* \*

Երբ փողոցների լեզուն համրացել է  
մանկությանս անիվների տակ,  
և իմ խաղերում  
անշարժացել են խաղալիքներս,  
շարունակվում է իմ մանկությունը  
որդուս խաղերում,  
շարունակվում է,  
որպես տեսարան,  
որ դ՛րս էր մղվել...  
ներկայացումից:

\* \* \*

Գուցե գնդակն իր ճակատագրով  
չափել է կյանքը.  
մեկի աչքերն է կուրացրել նա,  
մյուսի՝ երանգը...  
Մի բան, որ նա չի՛ չափել՝  
հավանոն է,  
որից մենք սկսվել ենք...

\* \* \*

Եվ փնտրումներիս հայելիներում  
շրջում եմ, ինչպես...  
բանտախցի մեջ:  
Հայելիների իշխանությունը  
սահմանափակ է:  
Եվ դուռն եմ բացում բառի ինքնության:

\* \* \*

Յոգիս սոսնձել ես քո տան պատերին,  
որպես զարդանախշ:  
Եվ զսպանակված ողբերգություն կա հայելիներում:  
Ոչ մի տեղ այնպես չի մերկանում հոգիս,  
ինչպես կարոտի առանձնարանում:  
Ես կանցնեմ քո ձայնի ավեր փողոցներով  
և նրանց խուլ անկյուններից  
մոռացված մի աղջիկ  
կգա՛ ինձ ընդառաջ...

\* \* \*

Մերթ գրիչս դնում եմ ցած,  
որպես անչափ հոգնած մի խոհ,  
որ թվում է՝ սկզբում ծանծաղ,  
երբ բացվում է՝ այնքան է խոր,  
որ զգում եմ. կարոտիս մեջ  
կորուստներդ են արձագանքում...

Մերթ գրիչս ընկնում է ցած  
իմ ահաբեկ հայացքի պես,  
երբ կանգնում ես իմ դեմ հանկարծ  
և թողնում, որ հարստանամ  
քո դեռ չասված խոսքի օրով,-  
և օրն՝ ինքն էլ խոսք է չասված:

Մերթ գրիչս սուզվում է ցած,  
ինչպես դույլը՝ ջրհորի մեջ.  
ես ձգում եմ լարը մտքիս,  
որ դուրս հանեմ գեթ մի պատկեր,  
ես ձգում եմ՝ չիմանալով,  
որ այն վաղուց կտրված է...

## ՀԱՅՈՑ ԳԻՐԸ

Օ՛, հայի համար ճակատագիրը  
ինչքան կուսական լուսանցքներ ունի,  
ուր Աստծո կողմից համբուրված գիրը  
բացահայտում է ոգին Անհունի:

Այդ լուսանցքներից մեկն իմ ճակատն է,  
ուր Աստված անհայտ մի խոսք է գրել,  
ուր պատանդ է դեռ ոգին Անհունի,  
իսկ լռությունը՝ աստղաշունչ գիր է:

Առավոտների լույսն է ծալծված  
իմ հիշողության շերտերի տակ մուգ,  
ես փնտրում եմ ինձ և գտնում եմ ղմ.  
քեզ՝ քո վշտերի հետ գրկախառնված...

Ամեն հայացքս՝ առասպելի դրոշ,  
ամեն մտորում՝ թերթ մագաղաթի.-  
քո ձեռքում, երկիր, ես կայծակե թո՛ւր,  
իսկ գրած տողս՝ արծվի ճախրանք է:

Օ՛, հայի համար ճակատագիրը  
ինչքան կուսական լուսանցքներ ունի,  
ուր Աստծո կողմից համբուրված գիրը  
բացահայտում է ոգին Անհունի:



## ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ ստվերը պատի վրա  
 մեծ է այնքան,  
 ինչքան՝ իմ վախը,  
 քեզ կորցնելն՝ վախը  
 հայրենիք:

Քեզ ունենալն՝ հանգստությունը  
 ծածկում է ծառերիդ արմատները,  
 հողի՛ պես գրկում է ծառերիդ արմատները՝  
 անողոք կռիվներից  
 շախմատի պես  
 վանդակապատ:

Պատմության միջանցքներով անցնող քամին  
 բացում է մարդկային ոտնահետքեր,  
 լկված,  
 մոռացված,  
 վիրավոր ոտնահետքեր...

Ուզում եմ բառերից միանգամից դնուս մղել  
 դատարկությունը  
 և լինել այն, ինչ դու ես ուզում.  
 լինել... բանաստեղծ  
 և... ազատամարտիկ:

Մի պահ, և ես սկսում եմ զգալ,  
թե ինչպես են ծլում,  
հողի մեջ ինչպես են կատաղորեն ծլում  
սլացքներդ...  
Շունչս՝  
առասպելի դուռ...

## ԿԱ ԼՈԿ ՍՏՎԵՐՆԵՐԻ ՄԻ ՇՂԹԱ

... Չկա կածան:

Կա լոկ ստվերների մի շղթա,  
որ չի զնգզնգում.

բանտված են քամիները...

Տեղ-տեղ շարժվում են

լույսերը,

ինչպես շան լակոտներ՝ աչքերով դեռ փակ,

որ կա՞թն են ծծում

ստինքներից հողի...

Երազները՝

աչքերով դեռ փակ,

խփվում են պատերին,

իսկ պատերը՝ այն ահարկու

լռությանը,

որից ես-աչքերով փակ-

պոկում եմ...

Երգն այս:

Յետո հողին են հանձնում

չծնված տողերիս ոսկորները.-

այդպես ես թաքցնում եմ

իմ լռությունը՝

ստինքն Ապագայի,

մնում անհատնելի՛,

ինչպես... վա՛ղը...

## 20-ՐԴ ԴԱՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Եվ խցանի՛ պես դուրս էր թռչում օրը  
ճանապարհների սեղմվող կոկորդից:  
Այդպես պատմության  
դեմքն էր թփրտում  
ուռկանում դարի:  
**Եվ Յայն աշխարհից  
դուրս էր մղվում նորից  
ու կորչում, որպես  
կողմնացույցը հղձի...**

ԳԻՏԵՄ՝ ՄԵՐ ՀԵՏՔԵՐԸ  
ՊԻՏԻ ԾԱՂԿԵՆ ՄԻ ՕՐ

Կոշկի փոխարեն  
մաշելով հոյսը՝  
մենք քայլե ՚լ ենք երկար:

Մեր աչքերը՝ լույսի  
չընթերցված գրքեր,  
որոնց էջերն, ավանդ, ժմրվեցին ցավից,  
և ո՞ւմ մտքով կանցներ,  
որ կարող են նրանք  
վերընթերցվել կրկին  
մեր լամպ-մանուկների տանիք հայցող ձիչով,  
թերթվել, անվերջ թերթվել  
մեր վեհ մարտիկների գալիքնաղել կանչով...

Լապտերի՛ պես հուշն է լուսավորում ճամփան...  
Մեր վերքերից ցավի  
բյուր աստղեր են հառնում...

Գիտեմ՝ մեր հետքերը  
պիտի ծաղկեն մի օր  
ձյունաթափ Մասիսի հպարտ լանջերին:

## ԱՉՔԵՐԻՍ ԾԻՐՈՎ ՅՈՍՈՒՄ Է ՈԳԻՆ

Եվ շան պես պոչն է շարժում արահետը  
սպասման լռության տաք մագիլներում:  
Տան շեմը, որպես ահազանգի բույն,  
կանչում է դեռ ինձ: **Ես որտեղ եմ  
և ո՞ւմ հագուստով եմ ներկայանալու  
առերեսմանը վաղվա:**  
Մրջյունն այս միակ շարունակությունն է  
իմ ապրումների: Ես կամ, թե՛ չկամ...  
Իսկ հանգած լամպը գրեթե փողկապ էր,  
որը այդպես էլ ես չըկըրեցի...  
Մի ավանդական սարսուռ է բողբոջել  
ճյուղերին ծառի...  
Եվ աչքերիս ծիրով հոսում է ոգին...

\* \* \*

Նայում եմ ես իմ ոտքերի տակ հեգ,  
ինչպես իմ ձայնի տաք արձագանքին,  
որի էջերում երկինք ու երկիր  
հյուսում են կապույտ առասպել ու երգ:

\* \* \*

Դու հեռանում ես... Քամին դասական  
ամեն քայլիդ մեջ կործանում է ինձ:  
Չայացքս, որպես կարոտի ուռկան,  
տարուբերվում է փողոցի վրա:

## ՈՐՊԵՍ ԱՆՅԱՅՏ ՈՂԲԵՐԳԱԿ

Ժամանակի և մոխիրի միջով  
քայլում, նորոգում եմ  
ավերված բներ:  
Ժամանակի և սարսուռի միջով  
քայլում եմ, որպես  
անհայտ ողբերգակ:

## ԵՌԱՆԿՅՈՒՆՈՒՄ ՃԱԿԱՏԱԳՐԻ

Բոլոր եղանակների հեթանոսական  
կիրքն է խտացել  
իմ ստվերի մեջ,  
որ կծկվել է  
եռանկյունում ճակատագրի,  
ավազանի մեջ  
իմ բուրբ-բուրբ արծազանքների:



ՍԵՐ

Ես ներկա եմ, թե՛ բացակա այս բառի մեջ:

Այս բառից դուրս՝ շնչահեղձ է լինում օրը:

Ինչ-որ մի տեղ դեռ պատանդ է հոգուս սերը:

**Ո՞ր բառից է ներկայանում գոյությունս**

**և ո՞ր կյանքից:**

Իսկ իմ սերը

սև ամպերի մագիլներում մարտնչող մի արեգակ է:

### ՅԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼԱՊՏԵՐԸ


Յիշողության լապտերը  
թանձր մուժի միջից  
իր ստվերն է նետել ճանապարհի վրա,  
որպես մի սուր՝ խրված  
ձերմակ բաբախի մեջ իմ երազանքի:

## ԻՆՁՆԻՑ ՊՈԿՎԱԾ ՎԱՅՐԿՅԱՆՆԵՐԸ

Ինձնից պոկված վայրկյանները,  
որ կուտակվում, կյանք են կոչվում,  
վերադառնում ու հղկում են  
իմ ավերը,  
քանդակագործ վարպետի պես,  
հետո հանկարծ ավերում են  
իրենց ստեղծածն ու  
հեռանում...  
Եվ այսքանից հետո միայն զարմանում եմ,  
թե ինչպես եմ ինձ ընդառաջ գալիս հեռվից...



Լուսանկարը՝ Ռոբերտ Բաղդյանի



**ՄԻՆՁԵՎ ...ՎԱՂԸ**  
**ՄԻՆՁԵՎ ...ՀԱՆԳՐՎԱՆ**

**Եվ արևատենչ երակներիս մեջ  
գլորվում է տաք  
արյան մի կաթիլ՝  
հորիզոնը հույսի:**

## ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ

Հոգուս մեջ նստած ստվերը ծառի  
ցատկում գետի մեջ  
և միանգամից զովացնում է օրը,  
իսկ ես դառնում եմ ուրույն մի պատկեր  
բնության վայրի վրձնահարվածի  
հստակ տիրույթում:  
Ես իմ արծազամնքն եմ,  
որ հազար տարի հետո հասնելով  
այս սուրբ բացատին,  
շիվ եմ արձակում  
և բուրում երգող  
թռչնի հայացքում:

## ՃԵՐՄԱԿ ՏԱՐԵՐՔ

Եվ սահմանագծին նստած թռչունները  
իմ տողերն են հիմա:  
Սպասում եմ նրանց վերադարձին:  
Եվ վարդի պես բացվում են ամպերը ձերմակ:  
Եվ արևատենչ երակներիս մեջ  
գլորվում է տաք  
արյան մի կաթիլ՝  
հորիզոնը հույսի:



## ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Ես հավաքում եմ  
մեր համբույրների  
փշրանքները տաք  
պատուհանիս գոգից  
և բոցավառում  
խորանում օրվա,  
որպես խարոյկ:  
Ես վերականգնում եմ  
ոգուս կրակով  
տեսողության հայտնի-  
անհայտ կամուրջները...

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄՔԸ

Կրակոցներից խրտնած ազնվական լռությունը  
թաքնվում է մի կերպ  
մարդկանց մտահոգ դիմագծերում:  
Երկնքից թափվում են փետուրներ ու արյուն,  
և թռիչքների աճյուններ են թափվում,  
և բիբերի մաքուր տարածություններ,  
և գույներ են թափվում,  
որ չի՛ ոգել դեռ ոչ մի վրձնահարված,  
և կուսական բույրեր՝  
սավանների ճերմակ խրախճանքին անտեղյակ...

Այդպես ընկնում են երկիր-երազի  
հիշողության խուլ տարածությունները  
լռության կապույտ տիրույթի վրա:

## ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհը սլամբ է,  
թե բացվող դեմքը ժամանակի...

Ժամանակը մերկանում է,  
ինչպես մոմի բոցը՝  
Աստծո հայացքի տակ:

Մարդիկ: Խաչեր: Վառվող մոմեր:  
Հիշողության տաք զարկերանկ:  
Խոսքը Ոգու աստղերի պես  
լուսավորում է մեր խորքերը:  
Եվ գմբեթը Եկեղեցու  
բարձր է պահում  
ոգին Հայի  
և երազը Հայաստանի:

## ԵՂԵՐԵՐԳ

Օ՛, քրտինքի հոգեվարք...  
Կրակի մեջ ու ձյունի  
Ինչքան ցավեր եմ կծկել  
Իլիկով խև ոտքերիս,-  
Ասա՛, ինչպե՛ս ես նայեմ  
Ցորենի կույր բիբերին,  
Երբ միջնադարն է հառնում  
Ժամանակի վիհերից:

Նոր էր խորանս բացվել  
Ցերեկներով իմ արյան,  
Անունից իմ բարձրացել  
Առեղծվածս աստղային,-  
Հիմա ինչպե՛ս ես նայեմ  
Ոգեխռով բիբերին,  
Երբ միջնադարն է հառնում  
Ժամանակի վիհերից:

Ես հերկել եմ աստղերի  
Շողով բուքը Անհայտի,  
Ջերմացրել ձեզ, որպես  
Մրգահասի՛ ծիածան,  
Վերք տուր - միայն չնայեմ

Երազալուր բիբերին,  
Երբ միջնադարն է հառնում  
Ժամանակի վիհերից:

Փակիր կոպերս՝ թեկուզ  
Ստվերներով զոհերի,  
Որ իմ հոգին չհամբարձվի՝  
Որպես խղճի պատարագ,-  
Ախր, ինչպե՞ս ես նայեմ  
Հավատաճիչ բիբերին,  
Երբ միջնադարն է հառնում  
Ժամանակի վիհերից:

## ԻՄ ՅԱՎԱՏԸ

Ամեն մարդու մեջ մի լուսավոր կետ կա,  
որը գործում է հաղորդակցության դաշտում,  
դառնում հիմնականն ու գերակշռողը:

Ամեն սիրո մեջ լույս հանգրվան կա,  
որը խթանում է ընթացքը կյանքի,  
դառնում անընթեռնելի էջը Յավերժի:

Ամեն երգի մեջ անակնկալ ելք կա,  
որը բեկում է ընթացքը սովորույթի,  
դառնում անըմբռնելի պահը Յրաշքի:

## ԵՐԿՆՔԻ ԸՆՁԵՌԱԾ ՄԻԱԿ ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ

Ես ներքաշում եմ հիշողությունս  
խորքերը ոգու.  
այդպես խխունջն է վտանգի պահին  
ընկղմում գլուխն իր պատյանի մեջ:

Եվ ինչ էի ես  
ո՛ւ իմ հայացքը.-  
մեղքի վարագույր,  
որով ծածկվում էր անտակ անդունդը  
իմ ամեն քայլի:

Պատերս ծեփված են տազնապրվ, գույժով:  
Եվ դատարկության դեմքը ասուպ է,  
որ սլանում է իմ արյան անել  
լաբիրինթոսում:

Ահա սենյակս.-  
ահա հոգևոր իմ հայրենիքի  
հանգրվանը լուռ,  
ուր ես փորձում եմ ասեղնագործել  
իմ աղոթքները  
երկնքի ընձեռած միակ լուսանցքում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՈՆԵՐ

ՈԳԵՅԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԸ.....	3
ԵՍ ԻՄ ԵՐԱԶՆ ԵՄ.....	67
ՈԳՈՒՍ ԾԱԴԻԿՆ Է ԴԱ.....	91
ՀՐԵՇՏԱԿԸ ԵՎ ԵՍ.....	117
ՄԻՆՉԵՎ ...ՎԱԴԸ, ՄԻՆՉԵՎ ...ՀԱՆԳՐՎԱՆ.....	195





ՌՈՐԵՐՏ ԱՐԱՄԻ ԵՍԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

Հատոր հինգերորդ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՈՒՆԵՐ

Սրբագրիչ՝  
Շարվածքը՝  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

Անահիտ Եսայան  
Ստելլա Սարգսյանի  
Ժաննա Ավանեսյանի  
Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>,  
ծավալը՝ 13 տպ. մամուլ +4 էջ ներդիր, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
Յ.Յակոբյան, 25  
Ստեփանակերտ-2018